Azg Ազգ

Azg armenian daily

21 ՅՈՒԼԻՍ 2000 ՈՒՐԲԱԹ 135 (2103)

Թուրքական թերթը «Հայոց ցեղասպանության թանգարանի» մասին

ՍՏԱՄԲՈՒԼ, 20 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ՝ Թուրքական «Սաբահ» թերթն անդրադարձել է Վաշինգտոնում կառուցվող հայոց ցեղասպանության թանգարանին: Լրագրող Սավաշ Այուգալը մասնավորապես գրում է. «Ամեն պատեհ առիթով այսպես կոչված հայոց ցեղասպանության հարցը ԱՄՆ-ում եւ Կոնգրեսում բարձրացնող հայկական լոբբին այս անգամ Վաշինգտոնում «Հայկական ցեղասպանության թանգարան» հիմադրելու գործին է անցել»:

Թերթը տեղեկացնում է, որ շենքը նախկինում եղել է հրեաների ողջակիզման թանգարան (բացարձակ սուտ. շենքը նախկինում եղել է «Ֆեդերալ բանկի» կենտրոնավայր-«Ազգ»): Լրագրողը մեջ է բերում նաեւ թանգարանի առնչությամբ տեղի ունեցած միջոցառման ժամանակ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից արված այն հայտարարությունը, թե «Թանգարանը կոչված է վերականգնել պատմական արդարությունը»:

ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻՈՅՄ

Նորից Մելիք-Ադամյան -2 հասցեում

10 տարի առաջ գումարվեց Գերագույն խորհրդի առաջին նիստը

ՆԱԲԻԼԵ ՄՈՒՐՏՈՅԱՆ

1990 թ. մայիսի 20-ին Համազգային շարժման օրինաչափ զարգացումներով ծեւավորվեց Խորհրդային Հայաստանի վերջին եւ նոր Հայաստանի առաջին Գերագույն խորհուրդը: Պատգամավորական 260 մանդատի համար մղվող անդուլ պայքարի արդյունքում խորհրդարան մտան երկբեւեռ քաղաքական ուժերը՝ կոմունիստական եւ Հայոց Համազգային Շարժման ներկայացուցիչները կամ նրա աջակիցները: 1990 թ. հուլիսի 20-ին գումարվեց Գերագույն խորհուրդի առաջին նիստը, իսկ օգոստոսին Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնում Լեւոն Տեր-Պետրոսյանի ընտրությամբ, այն տեւեց երեք օրուգիշեր, արձանագրվեց քաղաքական նոր համակարգի հաղթանակը: Այսպես բուռն ու փոթորկոտ սկսեց Հայաստանի Հանրապետության խորհրդարանը իր գործունեությունը: Ձեւավորվելով ու գործելով հարափոփոխ ու տենդագին ժամանակներում խորհրդարանը ստիպված էր վերադարձել ժամանակների հեւը՝ միաժամանակ լինել հանրապետության կայունության երաշխավորը:

Երեկ՝ 2000 թ. հուլիսի 20-ին, «Գերագույն խորհուրդ պատգամավորական ակումբի» նախաձեռնությամբ, ինչպես նաեւ Սահմանադրական դասարանի նախագահ Գագիկ Հարությունյանի աջակցությամբ սկսվեց ՀՀ 1-ին խորհրդարանի 10-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների շարքը: Տես էջ 2

ԲԱՆԱԿ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Սպանված զինվորների հարցը ՀՀ նախագահի նստավայրի առաջ եւ ներսում

Երեկ «Զինվոր եւ իրավունք» հասարակական կազմակերպության անդամներ՝ խաղաղ ժամանակ բանակում զոհված զինվորների շուրջ երկու տասնյակ ծնողներ փակել էին ՀՀ նախագահի նստավայրի մուտքերը, մինչ ոստիկանության աշխատակիցները օդակի մեջ էին առել նստավայրը՝ ապահովելով աշխատակիցների եւ այցելուների ելումուտը: Պիկետի մասնակիցները նախագահից պահանջում էին ընդունելություն՝ իրենց հուզող խնդիրները պարզելու նպատակով: Մամուլը, այդ թվում նաեւ **«Ազգը»**, բազմիցս անդրադարձել են այդ պահանջներին՝ զինծառայողների անպաշտպանություն վերադասների թե զինընկերների դաժանություններից, դասարանների եւ զինդասախազության անարդարամտություն, զոհվածների ընտանիքների սոցիալական վիճակ: Այլապես, բողոքավորները սպառնում էին դիմել հացադուլի, շրջափակել նստավայրը, գործել անպատասխանատու արարքներ:

Մի փոքր ավելի ուշ, երբ ցուցարարները դեռեւս չէին մեկնել, նախագահի նստավայր հրավիրված զանգվածային լրատվամիջոցների ղեկավարներին այդ կառույցությամբ իրազեկում էին նախագահի խոսնակ Վահե Գաբրիելյանը, զինդասախազի տեղեկալ Արմեն Հարությունյանը եւ նախագահի աշխատակազմի նամակների բաժնի պատասխանատու Մարգարիտա Ազարյանը:

Վերջիններս հրավիրվածներին բացատրում էին, որ նախագահի նստավայրի համապատասխան ծառայությունները, եւ թե զինդատախազությունը զգալի աշխատանք են տանում արդար բողոքներին ընթացք տալու, բարդ իրավիճակներում կատարված հանցագործություններին վերջին անդրադառնալու գործում: Այնուամենայնիվ, նշում էին նրանք, որոշ ծնողների դժգոհության պատճառը երբեմն պատժաչափն է, երբեմն իրավաբանական այս կամ այն որակավորումը: Ի զարմանս ներկաների, որդեկորույս ծնողների պահանջագիր-վերջնագրի գլխավոր կետերը վերաբերում էին գերազանցապես սոցիալական հարցերին՝ բոլոր

շակների բարձրացում, գերեզմանների ամբողջական բարեկարգում, զոհվածի ընտանիքում նոր զինակոչության բացառում, էլեկտրաէներգիայի վարձից եւ պետական տուրքերից ու հարկերից ազատում: Միայն վերջին պահանջն էր վերաբերում սպանվածների գործերի վերաքննությանը:

Իսկապես, դժվար մի կացություն. մի կողմից սոցիալական ծանր վիճակ եւ մյուս կողմից՝ չարացածություն իշխանության բոլոր օղակների նկատմամբ, մի կողմից խաղաղ պայմաններում որդի ու հարազատ կորցրածների վիշտ, եւ մյուս կողմից՝ բանակում դեռեւս արմատախիլ չարված անաստղջ մթնոլորտ եւ:

Ազատվեցին եւս 3 ադրբեջանցի գերիներ

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒԼԻՍ, ՄՆԱՐՔ՝ Հայաստանի ղեկավարությունը որոշեց բարի կամքի դրսեւորում եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ ազատ է արձակել ադրբեջանցի եւս երեք ռազմագերիների:

Հուլիսի 21-ին, էլշա Սաբիր օղլի Իսլամովը՝ ծնված 1979 թվականին, Քյամրան Աբդուլ Ռահիմ օղլի Ռահիբովը՝ ծնված 1980 թվականին եւ էլնուր Խանվերդի օղլի Քյամրամովը՝ ծնված 1981 թվականին, Երեւանից կմեկնեն Բաքու: Այդ մասին հաղորդեցին Հայաստանի Ազգային անվտանգության նախարարության մամլո ծառայությունում:

Սամվել Բաբայանը հացադուլ է հայտարարել

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ՝ ԼՂՀ պատգամավորության բանակի նախկին գլխավոր հրամանատար Սամվել Բաբայանը հուլիսի 20-ին հացադուլ է հայտարարել: Ինչպես հայտնի դարձավ «Սահմանադրական իրավունք» միությանն առընթեր մարդու իրավունքների հանձնաժողովից, նման որոշման պատճառ է դարձել այն, որ ԼՂՀ գլխավոր դատախազությունը փաստորեն մերժում է Ստեփանակերտից Երեւան տեղափոխել ինչպես ԼՂՀ նախագահի դեմ մահափորձի գործով նախաքննությունը, այնպես էլ դատավարությունը: դատախազության այդ մտադրության մասին Սամվել Բաբայանն իմացել է Արցախի լրատվամիջոցներից: Ի պատասխան ԼՂՀ գլխավոր դատախազության այն հայտարարության, որ Սամվել Բաբայանի պատշգամը դիտավորյալ ծգձգում է գործի նյութերին ծանոթանալու գործընթացը, ՍԻՄ-ին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողովը փաստաբան Ժուդեմ Շահարյանին օգնության է ուղարկել երեք հասարակական պատգամավորների, որոնք Ստեփանակերտ են ժամանել հուլիսի 19-ին: Թեեւ պատգամավորների մասնակցության իրավունքն ապահովված է ԼՂՀ օրենսդրությամբ, այնուհանդերձ բոլոր երեքը, ըստ ՍԻՄ-ի, մերժում են ստացել:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐ

BOND եվ L&M

ԾԽՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՎԱՃԱՌՈՂՆԵՐԻՆ

«Պարես Արմենիա» ընկերությունը, որ «Ֆիլիպ Մորիսի» պատգամավորական ներմուծողն է Հայաստանում, տեղեկացնում է բոլոր սպառողներին, որ Հայաստանի շուկայում հայտնվել են կեղծ L&M եւ Bond տեսակի սիգարետներ, որոնք հստակ կարելի է տարբերել նրանց վրա փակցված հին՝ 1998 թ. ակցիզային դրոշմանիշներով: Բոլոր ոսկեգույն նշագծերը խամրած են եւ տարբերվում են օրիգինալից: Տարբերվում է նաեւ ծխախոտատուփն իր դիզայնով, վերջին 2 ամիսներին Հայաստանի շուկայում վաճառվող «Ֆիլիպ Մորիսի» արտադրանքից: Սենք անհանգստանում ենք, որ մեր սպառողները գնելով այս կեղծ ծխախոտները, կհիասթափվեն ոչ համապատասխան որակից: «Ֆիլիպ Մորիս» եւ «Պարես Արմենիա» ընկերությունները կանեն բոլոր քայլերը սպառողին պատշգամանելու եւ կեղծ ծխախոտների վաճառքը կանխարգելելու համար:

Հ. Գ. Օգոստոսի 1-ից գործելու է նոր օրենքը, որով հին դրոշմանիշներով ծխախոտների վաճառքն արգելվելու է:

ԱՅԺ

Հատատուն հիմքեր տնտեսական գործակցության համար

Ավարտվեց վարչապետ Անդրանիկ Մարգարյանի երկօրյա պատշգամական այցը Բելառուսի մայրաքաղաք Մինսկ:

Ամփոփելով այցի արդյունքները, ՀՀ վարչապետը գոհացնող համարեց դրանք, նշելով, որ բանակցությունների ընթացքում ոչ միայն հստակեցվել են երկկողմ քաղաքական ու տնտեսական հարաբերությունների ուղղությունները, այլեւ ձեռք են բերվել գործակցության կոնկրետ պայմանավորվածություններ: Նա վստահություն հայտնեց, որ աշնանը Երեւանում կայանալիք միջկառավարական հանձնաժողովի 2-րդ նիստում կկնքվեն համապատասխան պայմանագրեր:

Այցի երկրորդ օրը հագեցած էր գործարար շրջանակների հետ հանդիպումներով, արտադրական ձեռնարկություններ այցելություններով: Վարչապետը եղավ այն ձեռնարկություններում, որոնք առավել հեռանկարային են հետագա գործակցության առումով, այցելեց «Բելոռուսրուսներ» կոնցեռն, առեւտրաարդյունաբերական պալատ, «Բելկոմունմաշ» արտադրական միավորում, Մինսկի տրակտորի գործարան: Վերջինը, ըստ զարգացման գործակալության տնօրեն Վ. Մովսիսյանի, հեռանկարային է այն առումով, որ կարող է Հայաստանում բացել իր մասնաճյուղը:

Ըստ վարչապետի, այցելած ձեռնարկությունները Բելառուսի արտադրական ներուժի վառ ապացույցն են, որոնք պահպանելով նախկին ավանդույթները, կարողացել են վերափոխվել նոր իրավիճակի պահանջներին համապատասխան:

Այցի շրջանակներում առանձին հանդիպում ունեցան պատվիրակության անդամ հայ գործարարներն ու նրանց բելառուս գործընկերները: Ամփոփելով բանակցությունների արդյունքները,

հայ-բելառուսական առեւտրատնտեսական ղեկավարը վստահեցրեց, որ արդեն գալիք տարվա սկզբին երկկողմ ապրանքաշրջանառությունը կարելի է հասցնել 6 մլն ԱՄՆ դոլարի, այն դեպքում, երբ անցյալ տարի կազմել է ընդամենը 600 հազար դոլար:

Վարչապետ Անդրանիկ Մարգարյանի խոսքերով, նրկա այցը հաստատուն հիմքեր ստեղծեց հետագա տնտեսական գործակցության համար:

Հ. Ղ.

«...Վահան Հարությունյան+10» գործով հուլիսի 22-ի դատական նիստում պետական մեղադրանքը պաշտպանող ՀՀ գլխավոր դատախազությունը ներկայացրեց մեղադրական ճառը: Քանի որ այս գործով հիմնական ամբաստանյալներից Վանո Սիրադեղյանը փախուստի մեջ է գտնվում եւ նրա մասով գործն առանձնացվել է մեղադրանքը պաշտպանողներն ամբաստանյալների հանցանքները գնահատելիս իրենց ճառում չանդրադարձան նրան: Բայց եւ այնպես, էական գործով անցնող հանցանքներն անմիջապես առնչվում էին նրան, եւ ՆԳ նախկին նախարար Վանո Սիրադեղյան անունը երեկ կրկին հնչեց բոլոր դվագներով:

Այսպես, պետական մեղադրողներն աղացուցված համարեցին էական գործի հիմքում ընկած այս բոլոր հանցանքները, որոնք մեղադրական եզրակացության տեսքով դատարանին էր փոխանցել նախաքննական մարմինը: Հրազդանի կիրճում սննդի օբյեկտների դիտավորյալ ոչնչացումը, Սերժ Ջիլավյանի դեմ կազմակերպված մահափորձը եւ մահափորձն իրականացնելու հանձնառությունն ստացած երկու երիտասարդների: Արթուր Հովհաննիսյանի եւ Կարեն Ռաֆայելյանի սպանությունները: Իբրեւ նորույթ կարելի է ընդգծել ներքին գործերի նախկին պետ Արծրուն Մարգարյանի մասնակցությունը հանցանքների կատարմանը, որը դուրս էր մնացել նախաքննության մեղադրական եզրակացությունից:

Մեղադրանքի համառոտ սյուժեն հետեւյալն էր: ՆԳ նախարար Վանո Սիրադեղյանը Սերժ Ջիլավյանի սպանությունը հանձնարարել է կազմակերպել ՆԶՎ պետ Վահան Հարությունյանին ու նրա տեղակալ Արծրուն Մարգարյանին: Վերջիններս մահափորձի կատարմանն ընդգրկել են Արթուր Հովհաննիսյանին ու Կարեն Ռաֆայելյանին նրանց տրամադրելով ատրճանակ, փամփուշտներ, մոսկվյան գրանցման անձնագիր: Մահափորձը ձախողվելուց հետո, երբ երեւանում զեկուցել են, որ այն ձախողվել է Արթուր Հովհաննիսյանի չծրագրավորված գործողությունների պատճառով, հետքերը ոչնչացնելու նպատակով Վանո Սիրադեղյանը հանձնարարել է սպանել երկու երիտասարդներին: ՆԶՎ աշխատակից, ամբաստանյալ Սահակ Բալյանին այդ նպատակով զենք է տրամադրվել, եւ վերջինս իրականացրել է վերադասի հանձնարարությունը՝ սպանելով երկու երիտասարդներին:

Այնուհետեւ, մեղադրական ճառն ընթերցող պրն Բաղիրյանն անդրադարձավ 11 ամբաստանյալների կատարած գործողություններին, որոնցով նրանք մասնակից էին դարձել վերը հիշատակված երեք հանցանքներին: ՆԶՎ նախկին պետ Վահան Հարությունյանը Վանո Սիրադեղյանի պատվերով դուրս է եկել օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմանից, կազմակերպել է երկու տղաների առեւանգումը դրանով կատարելով իշխանազանցություն:

ՆԳՆ նախկին նախարար Վ. Սիրադեղյանի հանձնարարությամբ, իր տեղակալ Արծրուն Մարգարյանի հետ համատեղ կազմակերպել է Սերժ Ջիլավյանի մահափորձը, կազմակերպել է Ա. Հովհաննիսյանի ու Կ. Ռաֆայելյանի բռնությամբ զուգորդված առեւանգումը եւ այդ ամենը թաքցնելու նպատակով, կազմակերպել է նրանց դիտավորյալ սպանությունը: Կազմակերպել է նաեւ Հրազդանի կիրճի սննդի օբյեկտների հրկիզումը դրանով կատարելով պետական եւ հասարակական շահերին վնասող արարք:

Նորայր Թադեւոսյանը Սերժ Ջիլավյանի դեմ մահափորձի նախապատրաստությանը մասնակցել է շահադիտական դրդումով, անձամբ կատարելու նպատակով անձամբ զենք է տեղափոխել Մոսկվա եւ սպանության հանգամանքները թաքցնելու նպատակով օժանդակել է 2 երիտասարդների (տուժողների) սպանությանը: Ամբաստանյալ Սահակ Բալյանը (Վահան Հարությունյանի մորաքրոջ որդին է) 94 թ. հունվարի 24 լույս 25-ի գիշերն իրականացրել է Ա. Հովհաննիսյանի ու Կ. Ռաֆայելյանի սպանությունը: Ամբաստանյալ Մկրտիչ Առաքելյանն օժանդակել է Ս. Բալյանի գործողություններին նրան ներքին գործերի վարչությունից տանելով ամառանոց, որտեղ պահվում էին առեւանգվածները, Բալյանի հետ ընտրել է սպանության վայրը եւ օգնել դիակները թաքցնելուն:

Ամբաստանյալներ Արթուր Շահբազյանը, Արթուր Խաչատրյանը եւ Սովսեպ Ներսիսյանն առեւանգվածներին ամառանոց տեղափոխելիս փակել են ճանապարհները եւ հսկել կազմակերպիչների անվտանգությունը:

Հայկ Աղաջանյանի, Երանոս Մելքոնյանի, Գագիկ Պետրոսյանի եւ Մուրադ Դաշտոյանի գործողությունները որակվեցին բռնությամբ զուգորդված իշխանազանցություն՝ նկատի ունենալով երկու երիտասարդների առեւանգումը նրանց կողմից: Երանոս Մելքոնյանը, Գագիկ Պետրոսյանը եւ Մուրադ Դաշտոյանը մեղադրվեցին նաեւ սպանության մասին մինչեւ իրականացնելը հստակորեն իմանալու եւ չհայտնելու մեջ: Հայկ Աղաջանյանին ավելի ծանր հանցանք վերագրվեց նա մասնակցել է դիակները թաքցնելու գործողությանը:

Պետական մեղադրողները երեկ բավարարվեցին ամբաստանյալների գործողությունները որակելով, իսկ պատժաչափերը կներկայացնեն երեքշաբթի օրը շարունակվող դատական նիստում:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Պետական մեղադրողները հաստատեցին իրական գործով անցնող 3 հանցանքները

Սոչիում եւ Վանաձորում՝ թվային հեռախոսակայաններ

Օրերս Արմենտել համատեղ ձեռնարկության գործադիր տնօրեն Իոնիս Լամբրեանոսն այցելեց Սոչիում եւ Վանաձոր: Նրան ուղեկցում էին Արմենտելի գլխավոր տեխնիկական տնօրեն Գոստաֆ Կայսարուլոսը, «Սիմենս» ֆիրմայի ներկայացուցիչ Դիոնիսիս Կուկիսը եւ ուրիշներ: Արմենտելի զարգացման ծրագրի համաձայն, Հայաստանում 150 հազար բաժանորդի համար թվային նոր կայաններ են տեղադրվում: «Սիմենս» ֆիրման թվային հեռախոսակայաններ է տեղադրում նաեւ Սոչիում եւ Վանաձորում: Սոչիում արդեն կառուցվել է թվային հեռախոսակայանի նոր բենը, որն օժտված է անհրաժեշտ բոլոր հարմարություններով: Այս տարածաշրջանում 2500 բաժանորդ ապահովվելու է հեռախոսով, այդ թվում 500 համար հատկացվելու է գյուղերին, ուր կգործեն ռադիոգծային հեռախոսներ՝ նոր տեխնիկայի ընձեռած բոլոր հնարավորություններով: Թվային կայանը կգործի այս տարվա վերջին: Արմենտելի ներկայացուցիչները Լոռու մարզային մասնաճյուղի տնօրեն Աշոտ Հովհաննիսյանի ուղեկցությամբ Սոչիում նորակառույցի պայմաններին ծանոթանալուց հետո եղան Վանաձորում, ուր նույն ֆիրման թվային կայաններ է տեղադրում 2, 3 եւ 4 թվանիշներով սկսվող կայանների համար: Դրանք կծառայեն 13 հազար բաժանորդի, իսկ Վանաձորի Դիմաց թաղամասում 3 թվանիշով սկսվող կայանում 7000 բաժանորդի համար: Մեր այն հարցին, թե թվային կայանների համար բաժանորդների վարձավճարները չի՞ բարձրանա արդյոք, Արմենտելի ղեկավարները պատասխանեցին, որ այն կմնա անփոփոխ: Նրանք հավաստիացրին, որ ներքաղաքային հաշվիչով վճարման, այն է՝ որքանավճարի հարցը եւս Արմենտելի եւ ՀՀ կառավարության փոխհամաձայնությամբ հետաձգվելու է մինչ տարեվերջ: Նրանք պատասխանատվություն հայտնեցին, որ հնարավորինս բոլոր հարցերը կկարգավորվեն հօգուտ բաժանորդների, հանգի Հայաստանի բնակչությունը գտնվում է սոցիալապես ծանր վիճակում: Սպասենք եւ հուսանք:

ՄԱՆՎԵԼ ՄԱՆՈՒՇՅԱՆ

Երեւանում վաճառվում է կերակրի աղ պարունակող շաքարավազ

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Հայաստանի Սպառողների միությունը օրերս դիմել է Երեւանի մի բնակիչ՝ խնդրելով փորձաքննության ուղարկել իր գնած շաքարավազի նմուշը: Ինչպես հուլիսի 20-ի ասուլիսում հայտնեց միության նախագահ Արմեն Պողոսյանը, ՀՀ արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոնում կատարված փորձաքննությամբ պարզվել է, որ շաքարավազի նմուշում սախարոզի քանակը, որը պետք է լիներ 99,75%-ից ոչ պակաս, կազմել է 41,09%, բացի այդ, ի տարբերություն նորմատիվային փաստաթղթի այն պահանջի, որ կողմնակի խառնուրդները պետք է բացակայեն, շաքարավազում հայտնաբերվել է կերակրի աղ: Շաքարավազը, որը Երեւանի բնակիչը գնել էր Ա. Վան-Առինջ թաղամասի խանութներից մեկում, տեսքից ոչնչով չի տարբերվում կողմնակի խառնուրդներ չպարունակող շաքարավազից, սակայն ունի աղի համ: Ըստ Ա. Պողոսյանի, ներմուծվող բոլոր տեսակի սննդամթերքները Հայաստանի սահման անցկացնելիս ենթարկվում են սուգման, հետո միայն նրանց տրվում է սերտիֆիկատ: Նրա կարծիքով, այս դեպքը հուշում է, որ մաքսային ծառայությունում կան սողանցքներ: Նա նշեց, որ փորձաքննության արդյունքները կներկայացվեն ՀՀ դատախազություն, որն էլ կգբաղվի այս հարցով:

Պատասխանելով լրագրողների հարցին, Սպառողների միության նախագահը նշեց, որ իրենց կազմակերպության նպատակը ոչ թե մարդկանց եւ կազմակերպություններին պատասխանատվության կանչելն է, այլ ահազանգելը, ինչը նույնպես ունենում է դրական ազդեցություն: Իբրեւ օրինակ նա ներկայացրեց հետեւյալ փաստը. մոտ մեկ ամիս առաջ միությունը հայտնել էր կատարված փորձաքննության արդյունքները, ըստ որոնց «Աշտարակ կաթ» ընկերության արտադրած թթվասերի յուղայնությունը 1%-ով ցածր էր եղել նախատեսվածից: Ավելի ուշ նույն սննդամթերքի փորձաքննությամբ պարզվել էր, որ յուղայնությունը բերվել է նորմալ վիճակի: Նա տեղեկացրեց, որ փորձաքննության է ուղարկվել նաեւ «Բարսեղյան եւ ընկերներ» ՍՊԸ «Գյուղացիական» կարագը, պարզվել է, որ նշված սննդամթերքի յուղայնությունը 1,5%-ով ցածր է նախատեսվածից:

ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄ

Նորից Մելիք-Ադամյան-2 հասցեում

Սկիզբը էջ 1

Ինչպես 10 տարի առաջ, երեկ եւս Մելիք-Ադամյան 2 հասցեում հավաքվել էր ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ: «ԳԽ պատգամավորական ակումբի» նախագահ Ռուբեն Թորոսյանը տեղեկացրեց, որ 271 պատգամավորներից ներկա են 117-ը, 17-ը՝ մահացել են, զոհվել, սպանվել, 17-ը՝ ադրում եւ աշխատում են արտասահմանում: Ներկա պատգամավորները, առանց պայմանավորվածության, զբաղեցրել էին դահլիճում իրանց տեղերը: Կարճ ժամանակով ներկա գտնվեց նաեւ ԳԽ պատգամավոր, ներկայումս պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը:

Սկսվեց պատգամավորների հաշվառումը՝ պատգամավորներ Ռոբերտ Քոչարյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի ազգանունների բարձրաձայնումից պարզ դարձավ, որ ՀՀ նախկին եւ ներկա նախագահները չեն մասնակցում: «Նա, ով խառնվում է քաղաքականությանը, պետք է պատրաստ լինի եւ օրինանք, եւ անեծք լսելու: Նա, ով որոշում է ազգին ծառայել, նա ազգից խոռվելու իրավունք չունի»: Այս խոսքերի հեղինակը Լեւոն Տեր-Պետրոսյանն է: Տեր-Պետրոսյանի բացակայության ֆոնի վրա աչքի էր զարնում նաեւ ՀՀՇ-ի՝ դեռեւս պահպանված կազմի բացակայությունը՝ ԳԽ 2-րդ նախագահ Բաբկեն Արարքցյանի գլխավորությամբ: Ինչպես:

ԳԽ-ի 10-րդ տարեդարձը ողջունեցին ՍԴ նախագահ, ՀՀ նախկին փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ նախագահի ուղերձն ընթերցեց ԳԽ փոխնախագահ, ներկայումս ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշես Թումանյանը, ՀՀ 1-ին վարչապետ, ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանը, «ԳԽ» պատգամավորական ակումբի տարեց անդամ, ժողովրդական նկարիչ Սարգիս Մուրադյանը, Ազգային ժողովի փոխնախագահ Գագիկ Ասլանյանը, Դարաբաղի պատգամավորներից Համլետ Գրիգորյանը: Նրանք ընդգծեցին ԳԽ դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում ընդհանրապես, վերջին տասնամյակում՝ մասնավորապես:

ԳԽ-ն ունեցել է 12 պատգամավորական խումբ եւ 5 խմբակցություն: Երեկվա հանդիպմանը կուսակցություններից հիմնականում ներկա էր ԱԺՄ-ն՝ լրիվ կազմով եւ կոմունիստները: Բացակայում էր ԱԻՄ-ը, ՀՅԴ-ն, ՀՌԱԿ-ի նախկին թե ներկա անդամների մեծ մասը:

Ներկա էին դիվանագիտական կորպուսից՝ Սիրիայի ժամանակավոր հավատարմատարը, Իրանի, Ուկրաինայի, դեսպանները, Ռուսաստանի դեսպանատան ներկայացուցիչները:

Նիստն ուղեկցվում էր ԳԽ-ի մասին ֆիլմի ցուցադրմամբ: Չկար որեւէ բացասական հույզ, անգամ՝ կիսաքննադատական մթնոլորտ: Նախկին գործընկերները բավականին կարոտել էին միմյանց, ընդհանուր մթնոլորտն ամբողջությամբ համահունչ էր Գերագույն խորհրդի ոգուն: Մասնավոր զրույցներից պարզ դարձավ, որ պատգամավորների մի սվար մասը գործազուրկ է:

Տեւական ժամանակահատված Հայաստանը դեռ ապրում էր խորհրդային օրենքներով, ուստիեւ այն բոլոր փաստաթղթերը, որոշումները, օրենքները, որ ընդունեց Գերագույն խորհուրդը մասնավորապես իր գործունեության առաջին երեք տարում՝ ունեցան պատմական արժեք: Գերագույն խորհուրդը դրեց անկախ պետականության հիմքերը՝ 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունելով Անկախության հռչակագիրը եւ վավերացնելով 91 թ. անկախության հանրաքվեի արդյունքները: Անկախության հռչակագրով էլ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն: Գերագույն խուրհուրդն ընդունեց պետականության խորհրդանիշները, օրենքներն ու որոշումները լեզվի, ազգային դրամի, քաղաքական եւ տնտեսական, մամուլի ու խոսքի ազատությունների մասին:

Միաժամանակ քաղաքական քարտեզը Հայաստանում լուրջ վերածեւումների էր ենթարկվում՝ Հայաստան էին վերադառնում ավանդական կուսակցությունները, լուրջ տարածայնություններ էին առաջացել նաեւ ՀՀՇ-ի ներսում: Այսեւայլ իրողությունները, բնականաբար, իրենց արտացոլումը պիտի գտնեին խորհրդարանում, ուր եւս քաղաքական քարտեզը փոփոխություններ արձանագրեց: Ներխորհրդարանական պայքարի արդյունքում խորհրդարանում ձեւավորված երկու հիմնական քաղաքական ուժերից առաջացան եւս 16-ը: Ըստ այդմ՝ խորհրդարանում ներկայացված հասարակական-քաղաքական կուսակցությունների թիվը արդեն Գերագույն խորհրդի գործունեության 4-րդ տարում հասավ 18-ի: Առաջին պատգամավորական խումբը՝ «Ազգայնականը», գործեց մինչեւ 91-ի մարտ ամիսը, 91-ի նոյեմբերին խորհրդարանում ձեւավորվեց ԱԺՄ-ն, 92-ի մարտին՝ ՀՅԴ-ն եւ ՀՌԱԿ-ը, 94-ի նոյեմբերին՝ «Ազգային առաջադիմությունը» եւ այլն: Գերագույն խորհրդում գործում էին 16 հանձնաժողովներ, որոնց անվանումները ու գործունեության ոլորտը համահունչ էին ժամանակի խնդիրներին. Անկախ պետականության վերականգնման եւ ազգային քաղաքականության հարցերի, աղետի գոտու եւ բռնագաղթվածների, Արցախի, լրատվության, ագրարային եւ գյուղի զարգացման հարցերի, ինչպես նաեւ մանդատային եւ էթիկայի հարցերի հանձնաժողովներ:

ՀՀ առաջին Գերագույն խորհուրդը, բացի այն հանգամանքից, որ ստեղծեց անկախ պետականության հիմքերը, ստեղծեց եւս մեկ մնայուն արժեք՝ սկզբնավորեց խորհրդարանական ավանդույթները՝ պառլամենտարիզմը, ինչի լավագույն դրսեւորումների արդյունքում էապես տարբերվեց նաեւ իր հաջորդներից՝ 2-րդ գումարման Ազգային ժողովներից:



«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայութիւն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՄԵՐԻԱԿ

ՊԵՏԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նախարարը մեղադրում է բոլորին՝ չմեղադրելով ոչ ոքի

Որ հանրապետության շատ գերատեսչություններ գործում են «մի ձեռը չգիտի, թե ինչ է անում մյուս ձեռը» սկզբունքով, հաստատվեց մի օրինակով եւս: 3 օր առաջ ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարարը ներկայացրեց այս տարվա առաջին կիսամյակի հարկային եկամուտների չափերը, որոնք կազմում էին նախատեսվածի 38 տոկոսը: Իսկ պետական եկամուտների նախարարության ներկայացրած ամփոփագրում 23 տոկոս է կազմում: Ի՞նչ է սա. հերթական թյուրիմացությո՞ւն, թե՞ իրական պատկերը կոծկելու մի փորձ եւս:

Ամեն դեպքում երկու թվերն էլ խոսուն են, եւ կարելի է նկատել, որ ցուցանիշները, մեղմ ասած, գոհացուցիչ չեն: Պետեկամուտների նախարար Գագիկ Պողոսյանն էլ դրանք «շատ վատ» գնահատեց: Ոչ հարկային եւ ոչ էլ մաքսային մուտքերը նախատեսված ոլանի նույնիսկ կեսը չեն ապահովվում, չնայած նախարարը մաքսային ոլորտում որոշակի առաջխաղացում է արձանագրում: Ա-ծը, ըստ նրա, պայմանավորված է վերջին շրջանի քաղաքական կայունությամբ, կառավարության, նոր նախարարի դեռեւս անծանոթ լինելու հանգամանքով: Այսինքն՝ հարկատուները դեռեւս չկողմնորոշվելով գերատեսչության որդեգրած գործելաոճի հանդեպ, ավելի բարեխիղճ ու պարտաճանաչ են դառնում, համենայն դեպս, սկզբի 2-3 ամիսներին: Սա հետաքրքիր մոտեցում էր եւ գուցե կառավարության պարբերաբար փոփոխությունների «ամենահիմնավորված» արդարացումը: Իսկ կարված հենց քաղաքական իրադրության հետ, նախարարը կարեւորում է հանրապետության նախագահի եւ վարչապետի քաղաքական գիծը. «Առանց նրանց օժանդակության, ով ուզում է լիներ, թեկուզ այս 2 ամսվա ընթացքում, չէր կարող որոշ ոլորտներ հարկային դաշտ բերել»:

Այսուհանդերձ տնտեսական այնպիսի ոլորտներ, ինչպիսիք հանքային ջրերի, ալկոհոլային խմիչքների եւ հացի արտադրություններն են, 35-70 տոկոս սպեցիալացություն են ապահովում: Նախարարությունը պարտավորվել է վերացնել այդ ոլորտներից «գոնե մեկը», թերեւս ամենաանվերահսկելիները սպիրտային խմիչքների անլեգալ արտադրությունը: Սակայն նախարարությունը միայնակ բավականին թույլ է տնտեսության կլանայնության ու կոռումպացվածության դեմ պայքարում:

Հատկապես վերջինիս հետ կապված նախարարի տվյալներով, դատարաններում այսօր մոտ 700 չլսված գործ կա, իսկ դատական հարկադիր կատարման վարույթում՝ 2070, որոնց գումարային արժեքը մոտ 38 մլրդ դրամ է: Այս գումարները փաստորեն բյուջե չի հաջողվում մուտքագրել միայն դատարանների անլիարժեք գործունեության պատճառով:

Այնուամենայնիվ, նախարարությունը շարունակում է ստուգումներ անցկացնել տնտեսվարող սուբյեկտներում: Դրանք հետաքրքիր արդյունքներ են տալիս: Հարկերից չարամտորեն խուսափում է 24 ծեռնարկություն՝ ընդհանուր 1,5 մլրդ դրամի հարկային պարտավորությամբ: Թափանցիկ չեն գործում նաեւ «Լեռնային բազե», «Արման», «Հրաշք լոտո» վիճակախաղային կազմակերպությունները եւ այնպիսի ծեռնարկություններ, ինչպես, ասենք, «Երեւանի համակցված կերերի գործարանը», «Եվրոսան ույուտը», «Բարի լոտոն», Երեւանի ՋԷԿ-ը եւ այլն:

Որակական նման վիճակում է նաեւ մասային ոլորտը: Շարունակում են վառելանյութի, ծխախոտի անօրինական ներկրումները: Անվերահսկելի է դարձել Բագրատաշենի շուկան: Այստեղ գործող «տանիֆային», կլանային երկաթյա համակարգն ահռելի գումարներ է պոկում բյուջեից եւ իր ամրությամբ պարզապես հնարավորություն չի տալիս այնտեղ մասակետ կառուցելու: Այստեղ իրենց էական դերն են կատարում նաեւ հարակից բնակավայրերի բնակիչները, որոնց կենսակերպը փաստորեն Սադախլոյի շուկայի հետ է կապված: Եվ չնայած մասակետի կառուցման ծրագիրը վաղուց է որոշվել, իրագործել չի հաջողվում: Պրն Պողոսյանը, սակայն, մեղադրում է բոլորին դրանով էլ փաստորեն չմեղադրելով ոչ ոքի:

Այս խնդիրները լուծելու համար պարզ է, որ նախարարությունն առաջին հերթին հենց իր կադրային քաղաքականությանը պետք է ուշադրություն դարձնի: Համակարգը ներսից քայքայվում է «պատահական մարդկանցով», որոնք, չգիտես ինչպես եւ ում ցանկությամբ, ընկել են այս ոլորտը՝ առանց անհրաժեշտ մասնագիտական որակի: Իսկ տարածքներում ոչ մեկի համար էլ գաղտնիք չէ, որ հարկային տեսչությունների աշխատակիցներն այսպես կոչված ընդհատակյա հարաբերությունների մեջ են մտնում հարկատուների հետ եւ ողորկում են հարկերից խուսափելու գործընթացը: Նախարարությունն առաջին քայլերն արդեն արել է՝ լուծարելով տարածքային 43 տեսչություններ, որոնք իրենց ֆունկցիաները կատարելու փոխարեն փաստորեն «նստած» էին բյուջեի վրա: Լուծարելուց հետո արդեն իսկ 6 մլրդ դրամի եկամուտներ են ավելացել հենց այդ տարածքներից:

Բացի սրանից, պետեկամուտների նախարարությունը, Գագիկ Պողոսյանի խոսքերով, մինչ այժմ ակտիվ օրենսդրական նախաձեռնություններով հանդես չի եկել՝ առաջնահերթությունը թողնելով ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությանը, որը «ոտի վրա օրենքներ է գրում»: Առաջնահերթ նպատակներից մեկն էլ այդ հաստատված կարգում բերելն է մտցնելն է:

Մինչդեռ երկու նախարարությունների հավասարակշռված գործունեությունը թերեւս կարող է ազդել հարկային, մաքսային ոլորտի օրենսդրության կատարելագործման եւ անհրաժեշտ ինֆորմացիայի փոխանակման արդյունավետության վրա:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՐԺԵՔ ԴԱՎԱԹՅԱՆ

«Ամերական» կադրային քաղաքականության հերթական հետեւանքը

Բնապահպանության նախկին փոխնախարարը մեղադրում է ու բացահայտումներ անում

1995 թ.-ից ի վեր բնապահպանության փոխնախարարի պաշտոնը զբաղեցնող Սամվել Բալոյանն անցած ուրբաթ, առանց որեւէ բացատրություն ստանալու, ազատվել է աշխատանքից: Իր հնգամյա պաշտոնավարության ընթացքում դիտողության կամ նկատողության չարժանացած, մասնագիտական բարեխղճությամբ աչքի ընկած նախկին փոխնախարարը երեկ ասուլիս էր հրավիրել՝ հայտարարությամբ հանդես գալու եւ հրապարակավ հարցադրելու, թե ո՞րն է իր «մեղքը»: Հարցադրումն, իհարկե, հռետորական էր, քանի որ Բալոյանն իրականում հրաշալի գիտեր իր «մեղքը», ինքը չի գոհացրել շատ պաշտոնյաների՝ հանդես գալով անկաշառության դիրքերից: Իսկ առաջնային պատճառը, Բալոյանի խոսքերով, հետեւյալն է. ինքը «խանգարում» էր... վարչապետին, քանզի իր զբաղեցրած պաշտոնն արդեն իսկ խոստացված էր բուսաբանության ինստիտուտի երբեմնի տնօրեն, այժմ արդեն՝ բնապահպանության փոխնախարար Արշաուս Զիրոյանին, որը Ա. Մարգարյանի մերձավորներից է: Հովանավորչության նմանօրինակ ցայտուն դրսեւորումից Բալոյանն անմասն համարեց բնապահպանության նախարար Սուրադ Սուրադյանին, որը տարբեր առիթներով դրական է գնահատել իր նախկին տեղակալի աշխատանքը, նշել, թե նրան կցանկանար հետագայում էլ տեսնել փոխնախարարի պաշտոնում: Ինչ վերաբերում է Զիրոյանի մասնագիտական կարողություններին, ապա դրանք, ըստ ամենայնի, անբավարար են բնապահպանության ոլորտում համակարգը ղեկավարելու համար. դեռեւս տնօրեն եղած ժամանակամիջոցում նա բազմիցս ցանկացել է թե իր ինստիտուտի առաջատար մասնագետների, թե լրատվամիջոցների կողմից:

ԱՐՍԵՆԱՐԵՍ

Սակայն փաստն այն է, որ նա արդեն փոխնախարար է, իսկ Բալոյանը՝ պաշտոնակ: Թե մեզանում մինչեւ երբ պիտի շարունակվեն այսօրինակ «ընկերովի» նշանակումները՝ անհայտ է, բայց արդեն իսկ մտահոգություն են հարուցում բնապահպանության ոլորտում կատարվող կադրային մեծաթիվ փոփոխությունները՝ հաճախ անհիմն: Ս. Բալոյանը հիշատակեց մի շարք այդպիսի պաշտոնանկություններ՝ մասնավորապես անդրադառնալով «Հայանտառի» նախկին տնօրեն Դավիթ Մաթեւոսյանի՝ նույնպես անցած շաբաթ տեղի ունեցած անակնկալ ազատմանն աշխատանքից: «Մաթեւոսյանը լավագույնն էր «Հայանտառում» մինչ այժմ եղած բոլոր տնօրեններից. ցավոք, նրան թույլ չտվեցին երկար պաշտոնավարել», ասաց Բալոյանը: Ապա շարունակեց. «Հովանավորչության նույն սկզբունքներից ելնելով էլ՝ «Սեւան» ազգային պարկի տնօրեն են ուզում նշանակել ոմն Սիրեկանի, որին «բերելու» են Սեւանի ձկնաբուծական կոմբինատից, իսկ կոմբինատը «վերահսկվում» է Աժ պատգամավոր Ալիկ Պողոսյանի (ՀՀԿ) կողմից»: Ի դեպ, Սեւանի ավազան իր վերջին ստուգայցի ընթացքում Բալոյանը որսագողության մի որջ է հայտնաբերել, ինչի համար վերադարձի ճանապարհին հետապնդվել է Մարտունու շրջանի հարկային տեսչության պետի կողմից. վերջինս խոստովանել է, որ որսագողերից առգրավված գույքի իրական տերն ինքն է, եւ գույքը ետ է պահանջել (ու մերժվել): Ահա այսպիսի արկածներ...

Շարաշահումները բնապահպանության ոլորտում բազմաթիվ են եղել, հատկապես՝ անտառային տնտեսության համակարգում (ուր բնափայտի աղտոտիչի հատումից գոյացած ստվերային շրջանառությունն ամեն տարի կազմել է 10 մլն դոլար), տեսչական համակարգում եւ այլն: Վերադառնանք կադրային քաղաքականությանը. անհիմն պաշտոնանկ է արվել հանրապետության պետական տեսչության պետի տեղակալը, ոչ պակաս անհիմն էլ հանրապետության էկոլոգիական փորձաքննության պետի պաշտոնում է նշանակվել մի անձ, որը միշ կապ ունի իր զբաղեցրած պաշտոնի հետ, «Հայանտառի» ներկայիս տնօրենն արդեն իսկ դեմ է արտահայտվում անտառաշինության առաջարկներին... Թվարկումը, Սամվել Բալոյանի ասածներին հիմնվելով, կարելի էր երկար շարունակել, սակայն սահմանափակենք: Փոխանակ կադրային «ֆոկուսներ» անելու՝ մեր իշխանավորներին թերեւս ավելի օգտակար կլիներ մտահոգվել, օրինակ, այն փաստով, որ Սեւանա լճի՝ անցյալ տարվա ընթացքում 15 սմ-ով բարձրացած մակարդակն այս տարի վերսին կտրուկ նվազել է. թույլատրելի 100-150 մլն խմ ջրի փոխարեն արդեն բաց է թողնված ավելի քան 190 մլն խմ ջուր: Եվ, առհասարակ, բոլորիս էլ օգտակար կլիներ, եթե մեր պաշտոնյաներն ավելի շատ զբաղվեին իրենց ոլորտներին առնչվող ավելի շատ հանրային, քան նեղ անձնական նշանակության խնդիրներով:

Բնապահպանության նախկին փոխնախարարի առնչությամբ նշենք, որ նա պատրաստվում է հերթական անգամ դիմելու ՀՀ նախագահին, որպեսզի վերջինս կարգավորի ոլորտում տիրող անբարենպաստ, կոռուպցիոն հակումներով իրավիճակը, իսկ իրեն՝ Բալոյանին, ընդգրկել սեփական ենթակայության կադրերի կազմում: Հակառակ դեպքում նախկին փոխնախարարը զբաղվելու է հասարակական գործունեությամբ՝ չլքելով բնապահպանության ոլորտը:

ԱՆՈՒՇ ԴԱՎԱԹՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Առա՛ջ դեպի... ետ

Գյումրիում 2,5 հազար ընտանիք է զրկվել նպաստից

... Մի մարդ փողոցով քայլելիս չի նկատում ու ընկնում է խոր փոսը: Ընկնում ու վախեցած կանչում է. «Օգնությո՞ւն...»: Այս բացականչությանն անմիջապես մոտ են վազում մի քանի թոշակառու ու սկսում վրավրա իրար հարցնել. «Չե՞թ, թե՞ լոբի»...

Զվարճապատում է: Երկու-երեք տարի առաջվա տխուր, դառը հումոր: Իհարկե, հիմա օգնություն լոբին, բրինձը չկան (կամ գրեթե չկան), չնայած որ տարեցտարի վաստակող կենսապայմաններն ու դրանց ծնած դառնությունը մնում են: Հիմա կա սոցնախարարության «Փարոսը», որն ինչքան էլ փոխփխեցին, «բարեփոխեցին», ժողովուրդը դրան տված «Քաոս» որակումը չփոխեց: Մանավանդ, երբ ներդրվեց ընտանեկան նպաստների համակարգը: Վերջինս այսօր նաեւ մի վառ օրինակ է դառնում այն բանի, թե ինչ է լինում, երբ պետության ցանկություններն ու հնարավորությունները չեն համընկնում:

Օրերս միացրի հեռուստացույցն ու Գյումրու «Շանթ» հեռուստառադիոընկերության լրատվությունից տեղեկացա, որ մարզպետարանի սոցաջակցության բաժինն արդեն ստացել է կառավարության որոշումն ու սոցապահովության նախարարի համապատասխան գրությունը, որոնց համաձայն ընտանեկան նպաստի բազային չափը ապրիլ ամսից սկսած սահմանվել է 3000 դրամ նախկին 3500 դրամի փոխարեն: Կոմունիստները կասեին՝ ժողովրդի նկատմամբ կուսակցության ու կառավարության հոգատարության մի նոր վառ դրսեւորում: Դե, իսկ մենք բոլորս հիմա քաղաքականապես այնքան լուսավորված ու հասուն ենք, որ առանց բացատրելու էլ հասկանում ենք. սա կապված է բյուջեի ճաքի հետ: Ուրիշ էլ ո՞ւմ քեֆին կոչեին մեր բարեփոխիչ պետական այրերը, որ այս հարցում նույնքան ըմբռնում գտնեին: Համ էլ, որ լավ մտածենք, այդ աղքատ, անապահովուն ընտանիքներին ի՞նչ օգուտ այդ նպաստներից, միեւնույն է, դրանք ամիսներով ուշանում են, իսկ ստանալիս էլ իրենք դրանք տալիս են լույսին, գազին, ջրին, աղբին եւ այլնին ու դատարկ նստում: Մարդիկ սա էլ են մտածել եւ մտցրել երկրորդ, իրոք ոչ պակաս «իրադարձային» նորությունը: Վերացրել են քաղաքապետարանին տրված որոշակի թվով քվոտաները, որոնցով նույն Գյումրիում շուրջ 1200 ընտանիք նպաստ էր ստանում: Մի քաղաքում, որտեղ անկախ ու ինքնիշխան Հայաստանի բոլոր կառավարությունները միասին վերցրած այսքան տարիների ընթացքում չեն ապահովել գեթ մեկ աշխատատեղ, տարատեսակ պատճառներով սոցծառայության ընտանեկան նպաստների ցուցակներից դուրս է մնացել կամ հացից զրկվել է բյուջեի ճեղքվածքի հարցում ոչ մի մեղք չունեցող մոտ 2450 ընտանիք... Ահա թեզ աշխատատեղ, ահա թեզ գնահատական...

Բայց չկարծեք, թե «վերեւում» նստած մարդիկ մտածել չգիտեն կամ ժողովրդի մասին բոլորովին չեն մտածում: Մտածում են, բա ո՞նց: Սոցծառայություններին երեւի կից ստեղծվելու են բազմանդամ աջակցության խորհուրդներ, որոնք գիտե՞ք ինչ գործունեություն են ծավալելու: Ուսումնասիրելու, գտնելու են կարիքավորության սահմանային միավորից ցածր միավոր ունեցող, բայց խիստ կարիքավոր ընտանիքներին եւ նրանց միայն մեկ անգամ տրամադրելու են... 3000 դրամ:

Հեռուստագովազդի ծերունու արտահայտությամբ՝ սենց էլ ապրում ենք, հա:

Իսկ մեծ երգիծաբանը լուրջ ու ցավով կասեր. հառաջդիմություն կը պոռանք՝ ետ-ետ կերթանք:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԵՐՈՒՄՆԵՐ

«Ալկատելի» ներկայությունը Հայաստանում ձեռնտու է բոլորին»

Եկել ենք ոչ թե դժգոհելու պայմաններից, այլ մեր աշխատանքով նպաստելու Հայաստանի տնտեսության զարգացմանը

Աշխարհը համակվել է ինտերնետով եւ դարձել խիստ շարժական: Գործարար հաղորդակցությունները գնալով ավելի են հենվում էլեկտրոնային փոստի վրա: Էլեկտրոնային առեւտուրը լայն հնարավորություններ է տալիս մեծ ու փոքր ձեռնարկություններին վաճառելու իրենց արտադրանքն աշխարհի տարբեր վայրերում: Հեռախոսային խոսակցությունները լույսի արագությամբ սլանում են օպտիկա-մանրաթելային կապուղիների շնորհիվ: Կարճ ասած՝ տեղեկատվությունն ու հաղորդակցությունը դարձել են ցանկացած երկրի ենթակառուցվածքի ամենահիմնական մասերը:

Հեռահաղորդակցության սարքավորումներ արտադրող եւ մատակարարող «Ալկատել» ֆրանսիական ընկերությունը, որը վայելում է համաշխարհային համբավ, ներկայացված է աշխարհի տարբեր մայրցամաքների ավելի քան 130 երկրներում: Ունի 116 հազար աշխատող: 1999-ի ընդհանուր հասույթը կազմել է 23.2 մլրդ եվրո: Գիտահետազոտական եւ զարգացման ծրագրերի, նոր տեխնոլոգիաների մշակման եւ ներդրման համար միայն 1999-ին ներդրվել է 3 մլրդ եվրո: Որպես հասարակական հաղորդակցության ցանցերի մատակարար «Ալկատելը» հաջողությամբ կարողացել է միաձուլել կոնսոլիդացված լարային եւ կոմուտացիոն ցանցերը նորագույն ոչ-կաբելային կառուցվածքների ինտերնետի պրոտոկոլի հետ: Շարժական հաղորդակցության ոլորտում առաջամարտիկ լինելուց բացի, ընկերությունը վաղուց արդեն ADSL (ասիմետրիկ թվային բաժանորդային գծերի) տեխնոլոգիայի առաջատարն է աշխարհում, որտեղ գործող գրասենյակների ավելի քան 50 տոկոսը զինված է այդ սարքավորումներով: «Ալկատելը» ներկայումս զբաղվում է շարժական կապի հետագա զարգացման որոնումներով, որը կնպաստի տվյալների գերարագ հաղորդակցմանը: Ընկերությունը զբաղվում է նաեւ երրորդ սերնդի հեռահաղորդակցության եւ համընդհանուր շարժական հեռահաղորդակցության (UMTS) համակարգերի եւ ցանցերի նախագծմամբ եւ տեղակայմամբ: Ընդհանուր առմամբ 17 մլրդ ամերիկյան դոլար ծախսելով, վերջին 18 ամիսների ընթացքում «Ալկատելը» ձեռք է բերել տվյալների հաղորդման սարքավորումների ոլորտում միջազգային առաջատար այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են Newbridge-ը, Xylon-ը, Packet Engines-ը, Assured Access-ը, Internet Devices-ը եւ Genesys-ը:

Հայաստանում «Ալկատելը» պաշտոնապես գրանցվել է 1998 թ. օգոստոսի 7-ին: Երեւանի Թեթեյան կենտրոնում բացված ընկերության ներկայացուցչությունը նպատակ ունի գործարար աշխարհին մատուցելու հեռահաղորդակցության ոլորտում նրբագույն արվեստի լավագույն նմուշները՝ սկսած օպտիկականից, վերջացրած անթել հաղորդակցական սարքավորումներով: Հայաստանի համար «Ալկատելը» ոչ միայն կապ է աշխարհի մյուս երկրների հետ, այլեւ ամբողջ երկիրն արդիականացնելու կարեւորագույն միջոց: Հուլիսի 6-ին, ինչպես «Ազգն» արդեն հաղորդել է, տեղի ունեցավ «Ալկատելի օրը Հայաստանում» շնորհանդես-միջոցառումը: Այդ առթիվ հարցազրույց ունեցանք ընկերության Երեւանի գրասենյակի տնօրեն Ավետիք Քալանթարյանի հետ:

– Ինչ նպատակներ էր հետապնդում միջոցառումը եւ ովքե՞ր էին այդ առթիվ ժամանել արտասահմանից:

– Թեթեյան կենտրոնում տեղի ունեցած այդ միջոցառմանը վաղուց էինք նախապատրաստվում: Հրատապ էինք համարում դրա իրականացումը, քանի որ անհրաժեշտություն կար հայաստանյան տուկային ներկայացնել «Ալկատել» ընկերության կողմից դարավերջին եւ դարասկզբին մշակված եւ միջազգային տուկայում արդեն իրենց արդարացրած հեռահաղորդակցության նորագույն տեխնոլոգիաները: Դարավերջը նշանակալի է այն առումով, որ հեղափոխական բնույթի փոփոխություններ են տեղի ունեցել հաստատ հեռահաղորդակցության ոլորտում, իսկ «Ալկատել» ընկերությունը, որպես այդ ոլորտի առաջատարներից մեկն աշխարհում, միշտ ձգտում է իր գործունեությունը համապատասխանեցնել կատարվող իրադարձություններին: Միջոցառման առնչությամբ Հայաստան էին ժամանել Հարավային եւ Արեւելյան Եվրոպայի կենտրոնակայանի փոխնախագահ Ամբրոջո Բանդերան, որն իր հետ բերել էր մի մեծ պատվիրակություն, կենտրոնակայանի կոմուտացիոն կայանային տեխնոլոգիաների բաժնի մասնագետներ, ներկայացուցիչներ ինտերնետ տնօրինությունից, ցանցային տեխնոլոգիաների, սարքավորումների տնօրինությունից, ինչպես նաեւ ձեռնարկությունների համար ստեղծված տեխնոլոգիաների, ձայնային ազդանշանների եւ տվյալների հաղորդման տեխնոլոգիաների ներկայացուցիչներ, նաեւ ռադիոհաղորդակցության մուտքի սարքավորումներ արտադրող մասնագետներ: Երեք օր շարունակ՝ հուլիսի 4-6-ը, մենք աշխատեցինք միասին Հայաստանում, ունեցանք բազմաթիվ հետաքրքիր հանդիպումներ ինչպես Հայաստանի կառավարության, այնպես էլ մեր հիմնական գործընկեր Արմենտել ընկերության եւ հեռահաղորդակցության տուկայում աշխատող տեղական այն բոլոր ընկերությունների ներկայացուցիչների հետ, որոնց ցանկություն էին հայտնել համագործակցել մեզ հետ:

– Ինչպիսի՞ն է «Ալկատելի» ռազմավարությունը եւ ինչո՞վ է պայմանավորված Հայաստանում նրա գտնվելու անհրաժեշտությունը:

– Հայաստանյան տուկա «Ալկատելը» մուտք է գործել դեռեւս 90-ական թթ. սկզբներին: 1993-ից սկսած այցելություններ են եղել «Ալկատել» ընկերության տարբեր տնօրենությունների եւ կենտրոնակայանների ներկայացուցիչների կողմից, փորձեր հաստատվել հեռահաղորդակցության, կապի նախարարությունների, հեռախոսային ցանցերի, Արմենտելի եւ այլ ընկերությունների հետ, որոնց արդյունքում արդեն 1996-ին Գյումրի եւ Ստեփանավան քաղաքներում «Ալկատելը» տեղակայեց թվային հեռախոսակայաններ: Առաջինը Գյումրիում՝ նվիրատվություն էր Ֆրանսիական կառավարության, «Ֆրանստելեկոմ»-ից եւ «Ալկատել» ընկերությունների կողմից, իսկ երկրորդը Ստեփանավանում՝ առեւտրական գործարք էր: Այդ առնչությամբ 1996-ի աշնանը Հայաստան ժամանեց ընկերության նախագահ Սերժ Չուրուքը, որը երկու կայանների բացման արարողություններն իրականացրեց: Այդ ժամանակվանից ի վեր այդ երկու կայանները մեծ հաջողությամբ եւ անխափան աշխատում են այսօր արդեն Արմենտելի համապետական ցանցում:

Ինչ վերաբերում է ընկերության ընդհանուր ռազմավարությանը, նշեմ, որ հայաստանյան տուկան հետաքրքիր է «Ալկատելի» համար, այն առումով, որ այստեղ տեղի են ունենում լուրջ զարգացման գործընթացներ: Ազգային օպերատոր Արմենտելը մասնավորեցված կազմակերպություն է, որն ունի լուրջ ներդրումային ծրագրեր առաջիկա տասնամյակի ընթացքում իրականացնելու աշխատանքներ, ներկրելու ժամանակակից հեռախոսակապի, տվյալների հաղորդման կապի եւ հեռահաղորդակցության սարքավորումներ, արդիականացնելու հայաստանյան ցանցը եւ մատուցելու նորագույն ծառայություններ հայաստանցի բաժանորդներին: Այստեղ է, որ «Ալկատելը», որպես այդպիսի սարքավորումներ եւ տեխնոլոգիաներ արտադրող եւ մատակարար, տեսնում է հայաստանյան տուկայում իր տեղը:

– Ովքե՞ր են ձեր հիմնական գործընկերները Հայաստանում:

– Մինչեւ 1998 թ. մեր պաշտոնական գրանցվելը եւ այդ ժամանակվանից ի վեր մեր հիմնական գործընկերը եղել է Արմենտել ընկերությունը: Մենք նրա գլխավոր մատակարարներից մեկն ենք: Մենք սպասարկման ծառայություններ ենք իրականացրել ցարդ, թվային կայաններ ենք տեղակայել եւ պարտաճանաչ կատարել մյուս բոլոր պատվերները: Գործընթացները չափազանց արագ են տեղի ունենում Արմենտելում եւ անընդհատ հայտարարվում են զանազան մրցույթներ սարքավորումների մատակարարման համար: Այդ մրցույթներին մենք սիրահոժար մասնակցում ենք՝ ներկայացնելով մեր կոմերցիոն առաջարկները: Մեր համագործակցությունն Արմենտելի հետ մինչ այժմ ընթացել է շատ սահուն եւ վստահության հիման վրա: Մենք գոհ ենք արդյունքներից: Իհարկե, ցանկալի է ընդլայնել դրա ծավալները, ունենալ ավելի շատ պատվերներ: Պատրաստ ենք համագործակցել նաեւ այն բոլոր կազմակերպությունների հետ, ովքեր ցանկություն ունեն ձեռք բերելու հեռահաղորդակցության սարքավորումներ: Ուրախ ենք, որ սերտ համագործակցություն ունենք կառավարական մարմինների եւ ձեռնարկատիրական բազմաթիվ ընկերությունների հետ: Այդ համատեղ աշխատանքի արդյունքում փորձում ենք մշակել նոր ծրագրեր, նոր տեխնոլոգիաներ, որոնք կհամապատասխանեն մեզ ներկայացված պահանջներին: Վաճառային մեր գործունեությունը Հայաստանում իրականացնում ենք մեր գործընկեր «Բի լայն» ընկերության միջոցով, որը մեր պաշտոնական դիստրիբյուտորն է Հայաստանում կաբելային համակարգերի տեղակայման, ինչպես նաեւ գերատեսչական հեռահաղորդակցական կայանների եւ ադրանիստեսակների մատակարարման տեսակետից: Չնայած բավական լավ եւ գոհացուցիչ ցուցանիշներին, մտադիր ենք ընդլայնել մեր համատեղ գործունեությունը:

– Ինչ կասեք շարժական, մոբիլ հեռախոսակապի սարքավորումների առատության մասին: Ինչ միջոցով են դրանք ներկրվում Հայաստան:

– Մենք համաշխարհային տուկայում մատակարարում ենք ինչպես հեռախոսային ապարատներ, այնպես էլ շարժական կապի ցանցեր եւ սարքավորումներ: Պատրաստ ենք նաեւ աշխատելու հայաստանյան կազմակերպությունների հետ, եթե նրանց կողմից այդպիսի ցանկություն կա: Այսօր հայաստանյան տուկայում վաճառվում են «Ալկատելի» եւ այլ արտադրողների սարքավորումները, GSM շարժական հեռախոսային ապարատները: Մեր առաջարկությունների հիման վրա որոշ տեղական ընկերություններ հաստատել են մեզ հետ ճանաչողական բնույթի հարաբերություններ, բայց գործնական քայլերի դեռ չեն դիմել: Հուսով ենք, տեղական ընկերությունները, որոնք մինչ այժմ ապարատներ են ձեռք բերում ոչ անմիջական, ուղիղ կապերի միջոցով, այլ ինտերնետ, ի վերջո կհասկանան հիմնական եւ վստահելի մատակարար ունենալու արդյունավետությունն ու ուղիղ կապ կհաստատեն մեր ընկերության հետ: Նման գործունեություն ծավալելն առաջին հերթին տվյալ ընկերության համար շահութաբեր լինելուց բացի, ձեռնտու է նաեւ երկրի՝ Հայաստանի համար, քանի որ պետական բյուջե կմուծվեն համապատասխան հարկեր եւ կիրականացվի օրինական բիզնես, որը վստահություն ներշնչելով նորանոր ներդրումների դռներ կբացի:

– Ինչն է նպաստում եւ ինչը խանգարում Ձեր գործունեությունը Հայաստանում:

– Ամեն մի երկիր, որտեղ «Ալկատել» ընկերությունն աշխատում է, ունի իր առանձնահատկությունը, իր բնորոշ հատկանիշները, իրեն հատուկ օրենսդրական դաշտը, ներդրումային քաղաքականությունը եւ ֆինանսական ռեժիմը: Հարգելով յուրաքանչյուր երկրի պայմանները, «Ալկատելը» համակերպվում է դրանց եւ գտնում աշխատելու եւ համագործակցելու ձեւեր:



Այս տեսակետից Հայաստանը բացառություն չի կազմում: Կա օրենսդրություն, համաձայն որի մենք աշխատում ենք: Չեմ կարող ասել, որ որեւէ օրենսդրություն մեզ խանգարում է ծավալելու մեր գործունեությունը: Իհարկե, ցանկալի է ավելի ժողովրդավարական, ներդնողների համար առավել ձեռնտու պայմանների ստեղծումը, սակայն այն, ինչ կա, բավարար է: Միակ խնդիրը, որ մեզ իրոք խանգարում է, սխալ մեկնաբանությունն է, չճշված տեղեկատվությունը, որոնք ժամանակ առ ժամանակ կարող են տարածվել բերբերում կամ հնչել եթերում: Ես խնդրում եմ՝ ովքեր ցանկանում են գրել «Ալկատելի» մասին, լուսաբանել նրա կազմակերպած որեւէ միջոցառում, դիմեն մեզ՝ ստանալու ճշգրիտ եւ սպառիչ տեղեկություններ, որոնք թյուրիմացություն չեն առաջացնի «Ալկատելի» եւ գործընկերների միջեւ: Սխալ մեկնաբանությունները ստեղծում են աղավաղված պատկերացում եւ ըստ այդմ էլ սխալ, անբարյացակամ վերաբերմունք մեր ընկերության նկատմամբ:

– Ինչո՞վ է ձեր ներկայությունը նպաստավոր Հայաստանի համար:

– «Ալկատելի» նման համաշխարհային համբավի արժանացած ցանկացած ընկերության ներկայությունը յուրաքանչյուր երկրում կարեւոր է ոչ միայն տվյալ ընկերության համար՝ որոշակի եկամուտ ստանալու եւ իր ձեռնարկատիրական գործունեությունը ընդլայնելու առումով, այլ մանավանդ այն երկրների համար, որոնք հետաքրքրվում են ներդրումների ձեռքբերման եւ օգտագործման նպատակներ: «Ալկատելի» նման ընկերությունների ներկայությունը խրախուսում է այլ ներդնող կազմակերպություններին, ձեռնարկատիրական կառույցներին վստահությամբ մուտք գործելու Հայաստան, հասկանալով, որ գործունեություն ծավալելու համապատասխան դաշտ կա այնտեղ: Իսկ դա երկրի համար նշանակում է լուրջ տնտեսական բարեփոխում եւ զարգացում:

Դա նշանակում է նաեւ աշխատատեղերի ստեղծում: Մեր ներկայությունից շահում են բոլորը, ովքեր աշխատում են մեզ հետ: Ունենալով պայմանագրային հարաբերություններ, նրանք ձեռք են բերում առաջատար սարքավորումներ, տեխնոլոգիաներ: Ինչպես գիտեք ADSL, UMTS մոբիլ կապի, ինտերնետային կապի առումով «Ալկատելն» այսօր առաջատար ընկերություններից մեկն է եւ արդեն մատակարարում է երրորդ սերնդի մոբիլ ցանցերի տեխնոլոգիաներ: Այս բոլորը մեր միջոցով ներկրելով Հայաստան, միանշանակ կզարգանա հեռահաղորդակցության ոլորտը: Իսկ ինչպես գիտեք, այդ ոլորտը կապված է բազմաթիվ այլ ոլորտների հետ՝ սկսած արդյունաբերությունից, վերջացրած մշակույթով: Հնարավորություն ունենալով օգտագործելու այս տեխնոլոգիաները, բոլոր ոլորտները զարգացման լուրջ առաջընթացներ կարող են կատարել: Այսինքն՝ մեկ ոլորտի զարգացումն իր հետ բերում է նաեւ ընդհանուր տնտեսության զարգացում: Եթե դրան ավելացնենք նաեւ սոցիալական խնդրի՝ նոր աշխատատեղերի լուծումը, պատկերը երեւի ավելի հստակ կդառնա: Նոր տեխնոլոգիաների տեղադրումն ու օգտագործումը երկրում նոր շահույթներ ստանալու հնարավորություն կստեղծի: Ավելի շատ կզանգահարեն Հայաստան, ավելի շատ կզանգահարեն Հայաստանից: Երկիր մուտք գործող ընկերությունը կկարողանա կապ հաստատել իր տվյալների բանկի, տվյալների բազաների հետ: Սա նույնպես շահույթի աղբյուր է հայաստանյան բյուջեի համար: Այնպես որ, մեր ներկայությունն այստեղ միայն դրական է, եւ միայն շահութաբեր՝ ոչ միայն «Ալկատելի», այլեւ բոլոր այն գործընկերների համար, որոնք աշխատակցում են մեզ հետ՝ լինի դա Արմենտելը, լինեն դրանք ինտերնետային ծառայություններ մատուցող ընկերություններ, թե ձեռնարկատիրական այլ կազմակերպություններ կամ կառավարության մարմիններ: Այնպես որ, կրկնում եմ, «Ալկատելի» ներկայությունը Հայաստանում, բացի օգուտից, ուրիշ ոչինչ չի բերի:

Հարցազրույցը վարեց
ՀԱՍՄԻԿ ԾՈՒԼՈՒԿՅԱՆԸ

ԱԶԳ

Միջազգային

ԶՍՐՄԱՆՔ

Միգուցե Հիսուս Քրիստոսն է՞լ է վրացի

Վրացիներն նշում են Քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու 1700-ամյակը

Պատմագրությունը ճշգրիտ գիտություն չէ, ինչպես, ասենք, մաթեմատիկան: Սակայն պատմագրության մեջ կան ամրագրված թվականներ, որոնց ճշգրտությունը ոչ ոք չի կարող կասկածի տակ դնել: Այսպես. հստակ է եւ անժխտելի, որ Քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն առաջին անգամ ընդունել են հայերը: Սակայն, ըստ մեր հարեւան վրացիների, այդպես չէ: Օրերս Վրաստանի հինավուրց մայրաքաղաք Մցխեթում տոնվում էր Քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու 1700-ամյակը: Այսինքն՝ մ. թ. 300 թվականին առաջինը Վրաստանն է ընդունել Քրիստոնեությունը որպես պետական կրոն: Տոնակատարությունների ընթացքում 200 վրացիներ, հիմնականում երեխաներ, մկրտվեցին Մցխեթի եկեղեցում: Մինչ արարողությունը, վրաց հոգեւորականները ժողովրդին հիշեցրին եղելությունը. «Նինոն ապրել է երրորդ դարում, Երուսաղեմում: Մի գիշեր, երազում Նինոն տեսել է Սուրբ Աստվածամորը, որից նվեր է ստացել խաղողի ճյուղերից պատրաստված խաչը: Սուրբ Աստվածամայրը Նինոյին օրհնել եւ ուղարկել է Իբերիա՝ լուսավորելու տեղի անհավատներին՝ հեթանոս վրացիներին: Նինոն հաստատվում է Մեսխեթում, սկսում ճգնավորի կյանք՝ Աստծո խոսքը հասցնելով կռապաշտներին: Մի անգամ, երբ Մցխեթում հեթանոսական տոնակատարության ժամանակ Նինոն աղոթում էր Տիրոջը, կայծակի հարվածից կործանվեց այն կուռքը, որին զոհեր էին մատուցում»:

Քրիստոնեության 1700-ամյակը պետականորեն աշխարհում առաջին անգամ նշվելու է եկող տարի՝ 2001 թ. Հայաստանում: Այլ կերպ չէր կարող լինել, քանի որ Հայաստանն է առաջինը պետականորեն ընդունել քրիստոնեությունը: Պատմագրությունը փաստում է, որ հայերից հետո վրացիներն էլ են ընդունել քրիստոնեություն: Այստեղ մի թյուրիմացություն կա. հավանաբար մեր հարեւանները սխալվել են մաթեմատիկական հաշվարկներում, սխալ կատարելով գումարում-հանում բարդագույն գործողության ժամանակ:

«Նոստրադամուս» կենտրոնից մեզ դժվարացան պատասխանել, թե Նինոյի խաղողի ճյուղերից պատրաստված խաչը կապ ունի՞ վրացիների գինի շատ սիրելու հետ: Ենթադրաբար՝ Նինոյի գրպանում եղել է նաեւ հաց ու պանիր, այլապես վրացիներն այդքան շատ խաչապուրի չէին սիրի:

Իսկ միգուցե Հիսուս Քրիստոսն է՞լ է վրացի:

1500 աֆղան մոջահեդներ Ադրբեջանից Դաղստանով փորձում են ներխուժել Չեչնիա

Ռուսական արտաքին հետախուզությունը տեղեկություն է ստացել, որ Ադրբեջանում հավաքված շուրջ 1500 աֆղան մոջահեդներ մոտ օրերս փորձելու են ադրբեջանա-դաղստանյան սահմանով ներխուժել Չեչնիա: Դաղստանի Հատուկ նշանակության միլիցիայի ջոկատները (ՕՄՕՆ) ամբողջ կազմով տեղափոխվել են չեչենա-դաղստանյան սահմաններ՝ թույլ չտալու մոջահեդների մուտքը Չեչնիա: Պատրաստակամ է, որ դաղստանա-ադրբեջանական սահմանը (շուրջ 400 կմ-անոց) հսկելու փոխարեն, ռուսական ուժերն առավել անհանգստացած են չեչենա-դաղստանյան հատվածի հսկողությամբ: Չէ՞ որ մինչեւ Դաղստանով Չեչնիա անցնելը մոջահեդները պետք է նախ հասնեն Ռուսաստան-Ադրբեջան (դաղստանյան հատված) պետական սահմանը:

Առաջին անգամը չէ, երբ մահմեդական երկրներից վարձկանները Չեչնիա են սողոսկում Ադրբեջանի տարածքով: Ըստ էության, Ադրբեջանը (ինչպես նաեւ Վրաստանը) վերածվել է վարձկանների յուրահատուկ պլացդարմի: Ադրբեջանցիներին հասկանալ կարելի է. չէ՞ որ հենց այսօր Չեչնիայում կռվող դաշտային հրամանատարներն իրենց առաջին ռազմական մկրտությունը ստացել են ադրբեջանա-ղարաբաղյան ճակատում: Թե ինչ կորուստներ կրեցին չեչենները, կրկին չարժե հիշատակել: Միայն նշենք, որ խուճապահար փախչող Սալման Ռադուեւը երդվեց այլեւս չկռվել ադրբեջանական մամուլը մեկ անգամ չէ, որ գրել է, թե չեչեն վիրավորները բուժվում են Բաքվի հիվանդանոցներում: Բացի ներկայացուցչությունը, Բաքվում արդեն մի քանի տարի գործում է վահաբական կենտրոնը, որի տնօրեն, Քուվեյթի քաղաքացի Աբու Օվարը դաշտային հրամանատներին է փոխանցում մահմեդական երկրներում ջիհադի նպատակով հանգանակած գումարները: Մի քանի ամիս առաջ, երբ հեռախոսազրույց էի վարում նախագահ Ալիեւի աշխատակազմի արտաքին հարաբերություններով պատասխանատու Նովրուզ Մամեդովի հետ եւ նրան ակնարկեցի Բաքվի վահաբական կենտրոնի մասին, բարձրաստիճան պաշտոնյան տեղեկացրեց, որ Ադրբեջանի տարածքում գործող արտասահմանյան կրոնական կազմակերպությունները գրանցված են երկրի արդարադատության նախարարությունում, իսկ նրանց գործունեությունը չի հակասում Ադրբեջանի սահմանադրությանը:

Ռ. Հ.

Բաքուն հերքում է եւ մեղադրանքը հասցեագրում Վրաստանին

ՍՈՒԽՈՒՄԻ, 20 ՀՈՒԼԻՍ, ՍՆԱՐՔ: «Իբր Ադրբեջանից 1500 չեչեն գրոհայիններ Դաղստան եւ Չեչնիա նախապատրաստվող ներխուժման մասին Ինտերֆաքս գործակալության հուլիսի 19-ի հաղորդումը հերքական նպատակուղղված սադրանք է», հայտարարել է Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության մամուլի ծառայության ղեկավար Արազ Ղուրբանովը: Նրա խոսքերով, Բաքվում այդ հաղորդումը ստանալուց անմիջապես հետո Ադրբեջանի համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչները կապվել են ՈԴ Հյուսիսային Կովկասի սահմանապահ տարածքի հրամանատարության, ինչպես նաեւ Դաղստանի Պետխորհրդի նիստի մասնակիցների հետ, որոնք իբր հայտարարել են գրոհայինների նախապատրաստվող ներխուժման մասին: «Ինտերֆաքսի հաղորդման մեջ հիշատակված Դաղստանի պաշտոնական անձինք հերքել են իրենց վերագրվող խոսքերը եւ հաղորդել, որ հիշատակված նիստի ժամանակ խոսքն Ադրբեջանին չի վերաբերվել», ասել է Ղուրբանովը: Այդ նիստի ընթացքում խոսվել է Դաղստանի սահմանների վրա ստեղծված բեռածին իրավիճակի եւ Վրաստանից չեչեն գրոհայինների Հյուսիսային Կովկաս ներթափանցման հնարավորության մասին:

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ

Քեմփ Դեյվիդ. Բանակցություններն ավարտվեցին, բայց շարունակվո՞ւմ են

Ինչպես ակնկալվում էր, հուլիսի 20-ի առավոտյան Սթիսակ տան խոսնակ Ջո Լոկհարդը հայտարարեց, թե «Քեմփ Դեյվիդի գագաթաժողովն ավարտվեց առանց համաձայնության հասնելու պաղեստինցիների եւ իսրայելցիների միջեւ»: Նա չօգտագործեց «ձախողում» բառը, չնայած իրականում դա է տեղի ունեցել: Այնուհետեւ, ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը, որ 24 ժամով հետաձգել էր իր ճապոնական այցը, հայտնեց, թե պաղեստինցիներն ու իսրայելցիները մնալու են Քեմփ Դեյվիդում, ավելացնելով, որ «դեռեւս ճեղքվածքը մեծ է նրանց միջեւ, բայց առաջխաղացում արձանագրվել է»: Նշյալ 2 ծանուցումների հակասությունն ակնհայտ է, քանզի, եթե գագաթաժողովն ավարտվել է, ապա բանակցող երկու կողմերը ինչի՞ համար են մնալու Քեմփ Դեյվիդում:

Այնուհանդերձ, մինչ Քլինթոնի հայտարարությունը, Սթիսակ տան մի այլ խոսնակ՝ Բիլ Չի Քրաուլին նշել էր, որ ԱՄՆ նախագահը վերջին 3 ժամերին կատարել է մաքոքային եռանդուն այցեր պաղեստինյան ղեկավար Յասեր Արաֆաթի եւ Իսրայելի վարչապետ Եհուդ Բարաքի միջեւ, սակայն այս ջանքերը հաջողությամբ չեն պսակվել: Հայտնի է դարձել, որ գլխավոր խոչընդոտը մնում է Երուսաղեմի հիմնահարցը: Քուվեյթի թղթակցի հաղորդմամբ, Քլինթոնը փորձել է երկու կողմերին ընդունել տալ իր գաղափարը: Նա առաջարկել է, որ Հին Երուսաղեմի մի մասը ենթարկվի պաղեստինա-իսրայելական համատեղ կառավարման: Ընդ որում, պաղեստինյան տիրապետության տակ են անցնելու Հին Երուսաղեմի այն մասերը, որոնք կառուցվել են 1967 թ. հունիսի 4-ի սահմանագծից դուրս: Այսպիսով, երկու կողմերի գերիշխանությունը կտարածվի Մեծ Երուսաղեմի որոշակի հատվածների վրա: Բայց Լոկհարդի վերոհիշյալ տեղեկությունից պարզվում է, որ Արաֆաթն ու Բարաքը փաստորեն մերժել են Քլինթոնի միտքը:

Ավելի ուշ՝ հուլիսի 20-ին, Հորդանանի ռադիոն ԱՄՆ նախագահին վերագրեց այն միտքը, որ Օկինավայում իր ԱԳ նախարար Օլբրայթը ջանալու է մերձեցնել հակամարտ կողմերի տեսակետները, նշելով, որ Քլինթոնը բանակցությունների իրավիճակը գնահատելու է Ճապոնիայից վերադառնալուց հետո:

Հարկ է արձանագրել, որ Քեմփ Դեյվիդյան 9-օրյա եռակողմ գագաթաժողովն անցկացվեց բավականին ջղաձիգ մթնոլորտում եւ գրեթե լրատվական կատարյալ մթագնության պայմաններում: Հետեւաբար, դժվար էր հենվել այն հակասական պողոքների վրա, որոնք մերթ ընդ մերթ արձակվում էին այս կամ այն կողմից եւ ավելի հոգեբանական պատերազմի դեր էին կատարում, քան արտացոլում բանակցությունների իրական պատկերը: Ուստի Բիլ Քլինթոնի առաջիկա գերխնդիրը լինելու է «ձախողում» բառից խուսափելը, քանզի, նրա խոսքերով, «հակառակը նշանակում է հավելյալ արցունք եւ արյուն»:

Ա. ՄՈՎՍԵՍՅԱՆ

Ստվերներ ծագող արեւի երկրում

Վերջերս Ճապոնիայում կայացած օրենսդրական ընտրություններն այն տպավորությունը թողեցին, թե երկիրն ընկրկելով է մուտք գործում 21-րդ դար: «Թուլացող տնտեսությունը, քաղաքից երկյուղած հասարակությունը, միջազգային ասպարեզում սահմանափակ դերակատարումը Ճապոնիայում քաղաքական նորացումների անհրաժեշտություն են ստեղծում», գրում է «Էքսպրես» հանդեսը: Ընտրությունների գլխավոր արդյունքը, մեկնաբանների կարծիքով, քարացածության հաղթանակն է: Շուրջ 48 տարի երկրում կառավարող լիբերալ-դեմոկրատական կուսակցությունն զգալի թվով քվեներ կորցրեց, բայց պահպանեց իշխանությունը: Իսկ ընդդիմության շահած քվեների թիվը հիմք չի տալիս խոսելու այլընտրանքային ուժի ստեղծման մասին:

Ճապոնիայում վերջին տարիներին բարձր կենսամակարդակը պահպանվել է հանրային ֆոնդերի զանգվածային ներարկումների հաշվին: Բայց աշխարհի երկրորդ տնտեսական տերությունում կուտակվել են անցյալի մի շարք մնացուկներ: Վերջին 5 տարիներին երկիրն սպիտված է տնտեսությունը համապատասխանեցնել միջազգային պահանջներին ու չափանիշներին (համատեղելիություն, կառավարում, մրցակցություն, ծեռնարկությունների ֆինանսավորում եւ այլն): Անհրաժեշտ են դրակոնյան բարեփոխումներ, ուստի մեծ է դրանք կիսաս-պռաս իրականացնելու գայթակղությունը:

Չնայած իր տնտեսական զորությանը եւ շոայլ նվիրատվություններին, ծագող արեւի երկիրը դիվանագիտության ասպարեզում էական դեր չի խաղում: «Սառը պատերազմի» ավարտից հետո ԱՄՆ-ի հետ նրա հարաբերությունները բավական բարդ են: Ճապոնիան անորոշ դիրք է բռնել ասիական հիմնախնդիրների (երկու Կորեա, երեք Չինաստան) նկատմամբ: Ճապոնացիները նախընտրում են փոխզիջումը, հաճախ հարում ԱՄՆ-ի տեսակետներին եւ առաջնային համարում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում տեղ ստանալը:

Ճապոնիայի հասարակական շարժումները մեծ մասամբ տեղային բնույթ են կրում: Ոչ կառավարական կազմակերպություններից որեւէ մեկը չի գործում համերկրային մակարդակով: Չկա «կանաչների» կուսակցություն: «Ճապոնիան փաստորեն միակ հարուստ երկիրն է, որտեղ 60-ական թթ. դժգոհների սերունդը չի տիրել իշխանությանը», նշում է արեւմուտքցի դիտորդներից մեկը:

«Այսօր ճապոնացիներից շատերն սկսել են վախենալ ԼԴԿ երկարամյա կառավարման ծեռքբերումներից: աշխատատեղերի կայունությունից, սոցիալական որոշակի հավասարությունից, ապահով քաղաքներից եւ առատությունից», նշում է «Էքսպրես» հանդեսը: Վերջին 50 տարում դասական համակարգը գրեթե չի զարգացել: Արդյունաբերական վերափոխումների հետեւանքով կրկին աղքատներ են հայտնվում: Կրթական համակարգը խոր ճգնաժամի մեջ է եւ այլեւս չի համապատասխանում երիտասարդների ձգտումներին: Ուսանողության փակ համակարգում վերջերս մի շարք խայտառակ պատմություններ բացահայտվեցին: Դեռեւս լրիվ բացահայտված չեն իշխանությունների պատասխանատվությունն ու սխալները «Սում» աղանդի հետ կապված գործում:

Ոմանց կարծիքով, Ճապոնիայի հասարակական կյանքը կարող է փոխվել միայն խոշոր ճգնաժամի հետո: Իսկ առայժմ Ճապոնացիների ապրած հուսախաբությունները հանգեցրել են անհատապաշտական տրամադրությունների աճի:

Պ.

Բացվեց Օննիկ Գույումջյանի լուսանկարչական ցուցահանդեսը

«Գերմանիա-Հայաստան երկխոսություն» շրջանակներում



Օննիկ Գույումջյանը

Երեկ Թեթեյան կենտրոնի ցուցասրահում բացվեց գերմանահայ ֆոտոլուսանկարիչ Օննիկ Գույումջյանի լուսանկարչական ցուցահանդեսը «Ազգ» օրաթերթի կազմակերպությամբ: Բացման խոսքով «Ազգի» խմբագիր Հակոբ Ավետիսյանը ողջունելով լուսանկարչին, կարևորեց ֆոտոլուսանկարչության դերը՝ նշելով, որ ֆինանսական հնարավորություններից ելնելով այն մեզ մոտ առայժմ լավ չի զարգացած:

Գերմանահայ մտավորական Ռաֆֆի Կանյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց Հանովերում «Էքսպո-2000»-ին Հայաստանի մասնակցությունը ներկայացնող լուսանկարներին: «Գերմանիա-Հայաստան երկխոսություն» վերնագիրը կրող ցուցահանդեսը խիստ համապատասխանում է բովանդակությանը: Օննիկ Գույումջյանն առաջին անգամ է ներկայացնում իր աշխատանքները Երևանում: Նրա հավատումն, որ կազմել է 1983 թ.-ից, հանձնված է դիտողի գնահատականին: «Իմ նպատակն է Հայաստանի ժողովրդին ներկայացնել, թե Գերմանիայում հայատեսակ ինչ գործունեություն են ծավալում հայերը, ինչն է արդյունավետ եւ ինչը՝ ոչ», ասաց գերմանահայ ֆոտոլուսանկարիչը:



Ռաֆֆի Կանյանը

34 վահանակները՝ յուրաքանչյուրում 6-ական լուսանկար, պատկերում են «Հայաստանի օր, բիզնես-ֆորում», «Սփյուռք եւ Ցեղասպանություն», «Գերմանահայոց կենտրոնական խորհրդի 30-ամյակը», «Համայնային խմբեր», «Բյուլնի «Էրեբունի» պարախումբը, Բեռլինի երգչախումբը», «Գերմանիայում ստեղծագործող հայ արվեստագետներ», «Ցուցահանդեսներ «Հայաստան. վերագտնված մշակույթի մի երկիր», «Բոխումի թանգարանում», «Մայլո ասուլիս, Բաֆու, 1988», «Բարձրաստիճան հոգեւորականների այցելություններ», «Դիմանկարներ» խորագրերով լուսանկարներ: Ցուցահանդեսում, ինչպես նշեց պրն Գույումջյանը, գերակշռում են «Արդիլի 24» վահանակներով լուսանկարները: Ֆոտոլուսանկարողը ներկայացնում է ցեղասպանության զոհերի հիշատակի, Հայկական հարցի շուրջ կատարվող միջոցառումները՝ նշելով, սակայն, որ «միայն ցույցերով արդյունք չի լինի, Գերմանիա-Հայաստան միջպետական մակարդակով պիտի քայլեր արվեն»:

Օննիկ Գույումջյանի լուսանկարչական ցուցահանդեսը Թեթեյան կենտրոնում շարունակվում է եւ այսօր:

ՆԱԻՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Սկսվեց Արամ Խաչատրյանի երաժշտությամբ

Միջազգային 22-րդ կինոփառատոնը

Հուլիսի 19-ին սկսվեց Մոսկվայի միջազգային 22-րդ կինոփառատոնը, որն ամենամյա դառնալու լուրջ հավակնություններ ունի: Առաջինից (1959 թ.) մինչեւ օրս կայացած փառատոների ժամանակ Ռուսաստանի մայրաքաղաքում ներկայացվել են աշխարհում ճանաչում գտած շատ կինոնկարներ, փառատոների հյուրերն են եղել ամենածանաչ գործիչները: Դա է հենց պատճառը, որ փառատոնի մասնակիցներին հատուկ շնորհավորանք էր ուղղել այդ օրը ԿԺԴՀ-ում գտնվող Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը (այն կարդաց ՌԴ կինոգործիչների միության նախագահ Նիկիտա Միխալկովը): Իսկ փառատոնի մասնակիցներին ողջունեց ՌԴ վարչապետ Միխայիլ Կասյանովը: «Ընդհանրապես ընդունված է երկրի կենսամակարդակի մասին կարծիք կազմել տվյալ երկրում նկարահանված կինոներով, ասաց Կասյանովը: Հույս ունենանք, որ այս անգամ հուսախաբ չենք լինի»:

Արամ Խաչատրյանի անմահ երաժշտության հնչյունների տակ կինոփառատոնի հյուրերը պարում են: Այնուհետեւ Նիկիտա Միխալկովը ներկայացնում է փառատոնի ժյուրիի նախագահ, հույն կինոռեժիսոր Թեո Արգելոպուլոսին, ժյուրիի անդամներ Չժան Ու Յանին (Չինաստան), Ժիսո Սինդոյին (Ճապոնիա), Սամիրան Մախմալբոյին (Իրան), Սերգեյ Սոլովյովին (Ռուսաստան), Կարոլին Դյուսեին (Ֆրանսիա), Իրվին Կերշներին (ԱՄՆ)... Թեո Արգելոպուլոսը հատոգված է, որ փառատոնի ժամանակ ցուցադրվելու են այնպիսի կինոնկարներ, որոնք երազելու հնարավորություն կտան բոլորին:

Իսկ ներկայացված ֆիլմերն իսկապես հնչեղ են գոնե անվանումներով: Արգենտինացիները ներկայացնելու են «Նույն սերը, նույն անձրեւը», ռուսները՝ «Լուսնով լի այգին», չինացիները՝ «Լուսնի խավարում» կինոնկարները: Փառատոնի ժյուրիին են ներկայացված նաեւ ֆրանսիական երկու ֆիլմ՝ «Այրին Սեն Պիեռ կղզուց» եւ «Թռիչքը», «Բիթ» (ԱՄՆ), «Լեռ» (Իսպանիա), «Վիլլա Լոբոս» (Բրազիլիա), «Մեր սերը» (Հունգարիա-Լեհաստան), «Հանրահայտ պատարագին» (Ռումինիա), «Կանացի թագավորություն» (Ուզբեկստան) եւ այլ աշխատանքներ: Հատկապես հետաքրքրություն է ծեւավորվել Գլեբ Պանֆիլովի Ռոմանովների մասին նոր ֆիլմի շուրջը:

41 տարի է անցել մոսկովյան առաջին կինոփառատոնից: 1959 թվականին Մոսկվան, հետեւելով աշխարհի մի շարք քաղաքների օրինակին, կազմակերպեց առաջին կինոփառատոնը, որին շատ ու շատ հայտնի կինոգործիչների հրավիրեց: Իտալական կինոյի աստղ Ջուլիետա Մազինին միշտ էլ ոգեւորությամբ է խոսել առաջին մոսկովյանի մասին, որի գլխավոր մրցանակը շահեց Սերգեյ Բոնդարչուկի «Մարդու ճակատագիրը» կինոնկարը:

Հավատանք մոսկովյան 22-րդի ժյուրիի նախագահ Թեո Արգելոպուլոսի կանխազգացությանը եւ սպասենք մինչեւ հուլիսի 29-ը, երբ հայտնի կդառնան փառատոնում առավել բարձր գնահատականի արժանացած աշխատանքները:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

«...Բայց ապրողներիս շատ է հարկավոր»

1979-ին լիտվացի ծանաչված արձակագիր Յոնաս Ավիժյուսի եւ նրա տիկնոջ՝ լրագրող Իրինա Լիտվինայտեի հետ Միխայել Նալբանդյանին նվիրված հոբելյանական հանդիսություններից հետո որոշեցինք այցելել Ծիծեռնակաբերդ՝ մեր հարգանքի տուրքը մատուցելու եղեռնի զոհերի հիշատակին:

Նոյեմբեր ամիսն էր: Մինչեւ «Հրազդան» հյուրանոցից ոտքով հասանք հուշարձան, մքնել էր: Մեր պարտքը մատուցելուց հետո, երբ վերադառնում էինք, հանդիպեցինք գինովցած մարդկանց խմբի՝ երեք կամ չորս հոգի, որոնք հասարակական զուգարանի էին վերածել մեզ համար (եւ ոչ միայն մեր) այս սրբատեղին: Նկատողությունս ազդեց, եւ նրանք հեռացան: Քսանմեկ տարի անց ականատես եղա մեկ այլ արտառոց դեպքի: Հավերժական կրակի մոտ մի ընտանիք էր՝ ծնողները եւ երկու երեխան: Չգիտեմ ինչի մասին էին զրուցում ծնողները, իսկ մեծ դուստրը՝ 13-14 տարեկան երեւի, որոշիկներով խաղում էր:

Այս անգամ նկատողություն չարեցի: Նկատողության փոխարեն ուզում եմ դիմել երեւանի քաղաքապետին (կամ գուցե ՆԳ նախարարին), մի՞թե հնարավոր չէ գոնե հուշարձանի մոտ հերթապահեն երկու ոստիկան կամ զինվոր: Այս հուշարձանը ոչ միայն մեր ժողովրդի, այլեւ աշխարհի ողջ առաջադեմ մարդկության համար սրբատեղի է: Ճիշտ է, երկու միլիոն անմեղ զոհերն այստեղ չեն թաղված, բայց այս հուշարձանը նաեւ նրանց սիմվոլիկ գերեզմանատունն է:

Հարգենք: Ու ինչպես Ռոբերտ Ռոժդեստվենսկին է ասել, հիշենք.

Դա զոհվածներին պետք չէ, ես գիտեմ,
Բայց ապրողներիս շա՞տ է հարկավոր:

ՖԵԼԻՔՍ ԲԱԽՇՅԱՆ

Մեր Մկրտչյան. լուսավոր հիշատակներ

Մեծերը օրեր եւ հոբելյաններ չունեն: Ավելի ճիշտ նրանց համար ամեն օր հոբելյան է: Ու նրանց մասին միշտ էլ խոսելու հետաքրքիր նյութ գտնվում է: Այս անգամ Մեր Մկրտչյանին կրկին հիշելու առիթ է տվել «Համայնապատկերը» տպագրելով Մեր Մկրտչյանի մանկության տարիների ընկեր Պարույր Չախալյանի հուշերը

(Գյումրիում հայտնի է որպես Չախալ Պարույր):

«Գյումրվա թատրոնը բեմադրում էր «Ոճրագործի ընտանիքը» պիեսը: Կորդադոյի դերում պետք է խաղար այն ժամանակ թատերախմբի աչքի ընկնող դերասան Սահակ Փափազյանը: Ֆրունզիկի խորհրդով ազդագրի վրա ուղղակի գրվեց՝ «Կորդադոյի դերում Փափազյան»: Քաղաքում անմիջապես տարածվեց անսպասելի լուրը՝ մեծանուն Փափազյանը ժամանել է Լենինական հյուրախաղերի: Տոմսերը, որ պարզապես քառակուսի կտրված թղթեր էին, ձեռքից ձեռք էին փախցնում: Ժողովուրդը, ներկայացումը սկսվելուց մեկ ժամ առաջ, շրջապատել էր ակումբը: Ներս մտնել հնարավոր չէր: Երբ սկսվեց ներկայացումը եւ բեմում հայտնվեց Սահակ Փափազյան-Կորդադոն, ժողովուրդն իրարով անցավ, մի քանիսը ներխուժեցին բեմ: Խեղճ Սահակին թատրոնի ետնամասի դռնից հազիվ փախցրին: Երկար ժամանակ նա չէր համարձակվում մտնել ակումբ...

... «Նամուս» ներկայացման մեջ Ռուսաստի դերն էր խաղում: Երբ հասավ այն պահը, որ պետք է խանչալը հաներ ու սպաներ Սուսանին, զգաց, որ փայտից պատրաստված խանչալը խոնավությունից ուռել, դուրս չէր գալիս պատյանից: Որպեսզի անհարմար վիճակ չստեղծվի Ֆրունզիկը հանգիստ դիմեց Սուսանին. «Հլը կուրծքդ բաց, տեսնիմ-խալ կա՞, հետո նոր խանչալս կհանեմ...»:

Ս. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Քնարիկ Բոյաջյան՝ «Երկրորդ հազարամյակի բանաստեղծ»

Ինչպես տեղեկացնում է Գլենդելում հրատարակվող «Համայնապատկեր» ամսագիրը (գլխավոր խմբագիր՝ Սարո Գեոդակյան), ճանաչված բանաստեղծուհի Քնարիկ Բոյաջյանին շնորհվել է բանաստեղծների միջազգային ակադեմիայի սահմանած «Երկրորդ հազարամյակի բանաստեղծ» պատվավոր

մրցանակը: Այն համալրեց բանաստեղծուհու տարբեր տարիներին ստացած գրական մրցանակների շարքը: Մեր ընթերցողներին հիշեցնենք, որ Քնարիկ Բոյաջյանի բանաստեղծությունների մի փունջ մայր հայրենիքում տպագրվել է Վահագն Դավթյանի անմիջական նախաձեռնությամբ:

Ս. Գ.

Գերմանացի նկարչուհին հայկական ժամանակակից արվեստում

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Գերմանացի նկարչուհի, Դյուսելդորֆի ակադեմիայի շրջանավարտ Կատարինա Ռոյթերը որոշել է իր ներդրումն ունենալ հայկական ժամանակակից արվեստում: Նկարչուհին, որի աշխատանքների ցուցահանդեսը ներկայումս գործում է Երեւանի Գեղագիտության ազգային կենտրոնում, «Նոյյան տապանի» թղթակցին տված հարցազրույցում նշեց, որ այսօր հայկական ժամանակակից արվեստում շատ երիտասարդներ նոր քայլեր են անում, եւ ինքը նույնպես ուզում է մասնակցել այդ գործընթացներին:

Կատարինա Ռոյթերի կարծիքով, հայերը հետաքրքիր արվեստագետներ ունեն, սակայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հայկական ժամանակակից արվեստը կարծես «զրոյական վիճակում» լինի՝ այն ո՛չ խորհրդային է, ո՛չ հետխորհրդային, եւ հետաքրքիր է նրանով, որ չունի կոնկրետ անցած ուղի, ինչպես Եվրոպայում, եւ ամեն ինչ նորովի է ստեղծվում: Կատարինան ընդգծեց, որ գտնվելով Եվրոպայում՝ ինքը պատկանում է Եվրոպական նկարչությանը, մտածողությանը եւ մշակութային շերտին, գտնվում է մեկ կոնկրետ համակարգում, իսկ Հայաստանում, որտեղ մշակութային համակարգի չպատկանելով՝ ինքն ազատ արտահայտվելու, ստեղծագործելու հնարավորություն է ստանում. «Հայաստանում ինձ գրավում է նորությունը, անսպասելի իրավիճակները, ինչը ստեղծագործելու նոր հնարավորություններ է բացում: Իհարկե, Հայաստանն ինձ գերելու համար այն էկզոտիկ միջավայրը չէ, ինչպես Թաիթին Գոգենի համար, բայց, այնուամենայնիվ, հետաքրքիր է»:

Իր գործերը, ըստ Կատարինայի, կրում են մեդիա-արտ՝ հեռուստատեսություն, մամուլ եւ այլն, ազդեցությունը: Որեւէ ուղղության՝ «-իզմ»-ի դրանք չեն պատկանում. «Մեր ժամանակներում ընդհանրապես այդ հասկացությունը դուրս է եկել: Այսօր մենք կարող ենք դատել անցյալում գոյություն ունեցած ուղղությունների մասին, իսկ այսօրվա արվեստում առկա ուղղությունների մասին պետք է դատեն ապագա սերունդները»: Ըստ նկարչուհու, ներկայումս Եվրոպայում չկան պաշտոնական եւ ոչ պաշտոնական, ավանգարդ եւ ոչ ավանգարդ արվեստներ, ինչպես Հայաստանում: Յուրաքանչյուրն ստեղծագործում է իր ծեւով, իր մտածողությանը համապատասխան:

Դյուսելդորֆի ակադեմիայում Կատարինա Ռոյթերն ուսանել է հանրաճանաչ պրոֆեսորներ Ժան Դիբբեքսի եւ Ալֆոնսո Հյուփփիի մոտ: Իսկ Հայաստանի Գեղարվեստի պետական ինստիտուտը, որտեղ նա սովորել է մի քանի ամիս, նրա կարծիքով, շատ ցածր մակարդակ ունի Եվրոպական արվեստի ակադեմիաների համեմատությամբ: Այն, ըստ նկարչուհու, դպրոց է, որտեղ սովորեցնում են դիմանկար նկարելու հմտություն, սակայն՝ ոչ մշակույթի օջախ, որտեղ սովորեցնում են մտածել արվեստի մասին, դառնալ իրոք պրոֆեսիոնալ նկարիչ:

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

«Շիրակը» դուրս մնաց պայքարից

Այո, Չեմպիոնների լիգայի առաջին նախնական փուլի պատասխան խաղում 1-2 հաշվով պարտություն կրելով Բելառուսի ԲԱՏ (Բորիսով) թիմից Հայաստանի չեմպիոնը հետագա պայքարին չի մասնակցի: Հիշեցնենք, որ մեկ շաբաթ առաջ Գյումրիում կայացած առաջին խաղն ավարտվել էր 1-1 հաշվով: Իհարկե, եթե թիմն իր դաշտում ոչ-ոքի է խաղում, դժվար է այնուհետեւ հաջողության հասնել: Բորիսովում կայանալիք հանդիպումից առաջ «Շիրակի» գլխավոր մարզիչ Անդրանիկ Ադամյանը, գնահատելով թիմերի հնարավորությունները, նախապատվությունը տվել էր մրցակցին՝ 60-40 տոկոսային հարաբերությամբ:

Խաղն սկսվեց թիմերի երկուստեք գրոհներով: Ընդ որում, ավելի ակտիվ էին գյումրեցիները: Բայց գոլ խփեցին դաշտի տերերը: 17-րդ րոպեին Վիտալի Ռագոժկինը գնդակն ուղարկեց «Շիրակի» դարպասը: Երկրորդ խաղակեսի սկզբում (49) հյուրերը գոլ խփեցին, բայց մրցավարը չհաշվեց այն՝ արձանագրելով խաղից դուրս վիճակ: Հանդիպման 58-րդ րոպեին դաշտի տերերը նոր հաջողության հասան. Եվգենի Լոբանկովը հաշիվը դարձրեց 2-0: Դրանից հետո նախաձեռնությունն անցավ Գյումրիի ֆուտբոլիստներին, որոնք հասկանալով, որ այլեւս կորցնելու բան չունեն, ամբողջ թիմով անցան հարձակման: Բելառուսի չեմպիոնը սխիրված էր խուլ պաշտպանության անցնել, բայց հյուրերը, այնուամենայնիվ, կարողացան գոլ խփել: 73-րդ րոպեին շիրակցիները հիանալի գրոհ կազմակերպեցին. գնդակը ծախ եզրից փոխանցվեց ԲԱՏ-ի տուգանային հրապարակում գտնվող Արթուր Պետրոսյանին, նա էլ գլխի հարվածով գնդակը հասցեագրեց Հովհաննես Թահմազյանին, որն էլ, նույնպես գլխի հարվածով, գրավեց դաշտի տերերի դարպասը: Դրանից հետո էլ գյումրեցիները շարունակում էին գրոհել, բայց 2-1 հաշիվն այդպես էլ չփոխվեց: Խաղավերջում, հազվադեպ հակագրոհներից մեկի ժամանակ, բելառուս ֆուտբոլիստները խփեցին 3-րդ գոլը, բայց այս անգամ էլ մրցավարը խաղից դուրս վիճակ գրանցեց:

Խաղարկության երկրորդ նախնական փուլ մտավ ԲԱՏ-ն, որն այստեղ կմրցի Շվեդիայի չեմպիոն «Հելսինգբորգ» թիմի հետ:

Ներկայացնենք բոլոր խաղերի արդյունքները: Փակագծերում բերված են առաջին խաղերի հաշիվները: Հաջորդ փուլ մտած թիմերի անվանումներն ընդգծված են:

ԲԱՏ (Բելառուս)–«Շիրակ» (Հայաստան)	2-1 (1-1)
«Բոսնյո» (Բոսնիա)–**«Ժալգիրիս»** (Լիտվա)	3-0 (0-4)
«Շամկիր» (Ադրբեջան)–«Սկոնտո» (Լատվիա) 4-1 հիմն.	2-1, (1-2)
«Լիվադիա» (Խոսնիա)–ՏՆՍ (Ուելս)	4-0 (2-2)
«Զիմբրու» (Մոլդովա)–«Տիրանա» (Ալբանիա)	3-2 (3-2)
«Լինֆիլդ» (Հս. Իռլանդիա)–**«Հակա»** (Ֆինլանդիա)	2-1 (0-1)
«Ռեյկյավիկ» (Իսլանդիա)–«Բիրիրկարա» (Մալթա)	4-1 (2-1)
«Ցր. Ձվեզդա» (Հարավսլ.)–«Կլակսվիկ» (Ֆարեր. կղզ.)	2-0 (3-0)
«Շելբուռն» (Իռլանդիա)–«Սլոգա» (Մակեդոնիա)	1-1 (1-0)
«Լեսկի» (Բուլղարիա)–«Դյուդելանժ» (Լյուքսեմբուրգ)	2-0 (4-0)

ԼՈՒՐԵՐ

Խմբային խաղերը կավարտվեն այսօր

Գերմանիայում շարունակվում է մինչեւ 19 տարեկան ֆուտբոլիստների Եվրոպայի առաջնությունը: Խմբային մրցումների երկրորդ տուրում գրանցվեցին այսպիսի արդյունքներ. «Ա» խումբ- Գերմանիա-Հոլանդիա՝ 3-0, Ուկրաինա-Խորվաթիա՝ 2-1, «Բ» խումբ- Ֆրանսիա-Չեխիա՝ 1-0, Ռուսաստան-Ֆինլանդիա՝ 1-1: Այսօր կայանալիք երրորդ տուրից առաջ խմբերում այսպիսի իրավիճակ է. «Ա» խումբ՝ 1. Ուկրաինա՝ 6, 2-3. Գերմանիա, Հոլանդիա՝ 3-ական, 4. Խորվաթիա՝ 0 միավոր, «Բ» խումբ- 1. Ֆինլանդիա՝ 4, 2. Ֆրանսիա՝ 3, 3. Ռուսաստան՝ 2, 4. Չեխիա՝ 1 միավոր:

Խաղարկվեց Եվրոպայի գավաթը

Անգլիայի Գեյթսհեդ քաղաքում անցկացվեց թեթեւատլետիկայի Եվրոպայի գավաթի հերթական խաղարկությունը, որին տղամարդկանց եւ կանանց 8-ական ուժեղագույն հավաքականներ մասնակցեցին:

Հատկապես համառ պայքար ծավալվեց տղամարդկանց թիմերի միջեւ: Ի վերջո հաղթող դարձավ Մեծ Բրիտանիայի հավաքականը, որը 101,5 միավոր վաստակեց: Ընդամենը կես միավորով ետ մնաց երկրորդ տեղը գրաված Գերմանիայի հավաքականը, իսկ երրորդը Ֆրանսիական մարզիկներն էին՝ 97 միավոր:

Կանանց մրցումներում չորրորդ տարին անընդմեջ հաղթեցին Ռուսաստանի մարզուհիները, որոնք 123 միավոր վաստակեցին: Հաջորդ տեղերում են Գերմանիայի (110 միավոր) եւ Ֆրանսիայի (86) հավաքականները:

Մեղավորները պատժվեցին

Բեռլինի դատարանը 22-ամյա պայմանական պատժաժամկետ է որոշել նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության մարզական ղեկավար Մանֆրեդ Էվալդին: ԳԴՀ-ի ազգային օլիմպիական կոմիտեի նախկին նախագահը, որն այժմ 74 տարեկան է, մեղավոր է ճանաչվել «պարբերաբար դոպինգ կիրառելու եւ դրանով բազմաթիվ մարզիկների առողջությանը վնաս հասցնելու գործում»: 18-ամյա պայմանական ազատազրկման է դատապարտվել նախկինում հայտնի մարզական բժիշկ, 66-ամյա Մանֆրեդ Հեմները: 70-ական թվականներին, լինելով գերմանական սպորտի ազդեցիկ դեմքերից մեկը, նա մեծ դեր է խաղացել արգելված խթանիչներ օգտագործելու հարցում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պաշտպանության նախարարությունը աշխատանքի (իսկական զինվորական ծառայության) է հրավիրում պարտադիր զինվորական ծառայություն անցած մինչեւ 35 տարեկան քաղաքացիների՝ նախարարության արտաքին հարաբերությունների, ռազմաքաղաքական հետազոտությունների, միջազգային իրավագիտության ստորաբաժանումներում ծառայելու համար:

Ընդունելությունը կիրականացվի մրցութային կարգով:

Պարտադիր պայմաններն են.

- օտար լեզուների իմացություն,
- աշխատանքային որոշակի փորձ ռազմաքաղաքական հետազոտությունների, միջազգային իրավաբանության, արտաքին հարաբերությունների բնագավառներում,
- վերլուծական կարողություններ:

Տեղեկությունների համար զանգահարել 289452, 357881, 357859 հեռախոսահամարներով:

ՀԵՌԱՏԵՍԱՏԵՍԻԼ

21 հուլիս

1

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Թիկնապահները»
10.05 Հայոց տաճարներ
10.20 Մամուլի կրպակ
10.30 Հասմիկ Հացագործյան
11.05 Գ/Ֆ «Էսկադրիլիայի հրամանատարը»
12.40 Բարի ախորժակ
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 «Լեգո» հեռուստամրցույթ
17.40 Մուլտֆիլմ «Ոսկեծեռ վարպետ Ֆոկան»
18.00 Հեռուստասերիալ «Թիկնապահները»
19.00 Մեկ լուր
19.10 Հայուհի
19.50 Պարմանի
20.20 Թեմական կյանք
20.35 Տուն-տունիկ
21.00 Հայլուր
21.45 «Ասպեկտ» Ցվետանա Պասկալեւայի հետ
22.20 Ազերիների քարոզչական հիստերիան
23.05 «02»
(Նույն ժամին արբանյակային հեռարձակմամբ
23.05 Կարճամետրաժ կինոնկար «Ոսկե գլիկը»)
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեպընթաց
01.00 Ռուբիկոն+

ՊՐՈՄԵԹԵՎՍ

9.00 «Բարի լույս, Հայաստան»
10.30 «Ամեն ինչ հանուն էն սիրո»
18.00 Մուլտծրագիր
18.10 Մանկական ժամ. սերիալ «Նինձյա կրիաները», սերիալ «Կոբրա»
19.00 «Ամեն ինչ հանուն էն սիրո»
20.00 Լրաբեր
20.35 Ռ. Մավիսակալյանի «Հարցեր» հեղինակային ծրագիրը
21.20 Օրը
22.30 Հեռուստատեսային վիճակախաղ «Նվեր»
23.35 Գ/Ֆ «Դոբերման»
(24.00 Լրաբեր)

2

9.00 Տոմար
19.05 Չղջիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Մեյ-դեյ
20.30 Ասպարեզ
22.05 Գ/Ֆ «Հոմերը եւ էդդին»
0.35 Ակնթարթ
0.40 Սուր սենյակ
1.00 Ուրբաթ գիշեր բոլորովին ֆուն չունեմ. Գ/Ֆ «Սպանություն սիրուց» (Սուրհանդակ)

4

7. 00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
16.00 Նորություններ
16.15 Վիկտորինա երեխաների համար
16.35 Գ/Ֆ «Անվերջ պատմություն: Նոր գլուխ»
17.55 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
19.00 Նորություններ
19.30 Ջենթլմեն-շոու
19.55 Մարդը եւ օրենքը
20.40 Հարեւանների դաշտ
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.45 Գ/Ֆ «Մեծայրի խելահեղությունը» (դերերում՝ Պ. Ուստինով, Ժ. Սթելթոն, ԱՄՆ)
00.30 Մոսկովյան կինոփառատոնի օրագիրը
00.35 Տարվա երգը
01.25 Նորություններ
01.40 Գ/Ֆ «Սֆինքսը» (դերերում՝ Ֆ. Լանգելա, Ջ. Գիլգուդ, ԱՄՆ, 1980 թ)

ՊՏՊ

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20 Հազար ու մեկ օր
7.30 Երկխոսություններ ծկնորսության մասին
8.30 ՊՏՊ-ի փոստը
8.40, 9.45 Բարի լույս, Ռուսաստան
9.20 Հեռուստատեսային ՀՄՄ
9.35 Ընտանեկան նորություններ
10.35 Մուլտֆիլմ
10.45 Մուլտսերիալ «Սեւ ծովահենը
11.15 Գ/Ֆ «Ջենթլմեն» (3-րդ սերիա)
12.05 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Երկխոսություններ կենդանիների մասին
14.00, 18.00, 21.00 Լուրեր
14.35 «Մարյինա ռոշա»
15.05 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.55 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
16.50 Երկու ռոյալ
17.40 Հեռուստատեսային ՀՄՄ
18.30 Հեռուստախաղ «Հարյուրը մեկին»
19.20 Սերիալ «Մարգո թագուհին»
20.25 «Քաղաքիկ»
21.45 Կինոյի ժամ. «Կուսակցության ոսկին»
23.35 Դեւիդ Դուխովնին, Թիմոթի Հաթոնը, Անջելինա জոլին «Պակերելով ասծուն» ֆիլմում (ԱՄՆ)
01.20 Վերջին սեանս. էրոտիկ ֆիլմ «Սոսոր»
03.15 Հերթապահ բաժանմունք

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Գայլիկոն: 2. Սմբաս: 3. Մանծոնի: 4. Օգանյան: 5. Արշակ: 6. Մանարյան: 10 Ամիրդովլաթ: 11. Մեֆիստոֆել: 15. Լուսինե: 16. Զարմիկ: 20. Արշակյան: 22. Ավանգարդ: 23. Բեթերել: 24. Գրենոբլ: 28. Կապար: 29. Ացտեկ:

Հորիզոնական

7. «Մարիամնա»: 8. Զարիֆյան: 9. Բարձվենյակ: 12. Ակումբ: 13. Անաբար: 14. Սենյու: 17. Գնարբուկ: 18. Մարիանա: 19. Փարվանա: 21. Սիկոյան: 25. Ասնակ: 26. Մեդորա: 27. Սեգան: 30 Մակեդոնացի: 31. Մանսիանե: 32. Բրեդբերի:



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ 6. Ցարական բանակում՝ կապիտան, կազակական զորքում՝ ...: 7. Հողը գցած հասիկ: 8. «Տարաբնակներից» են լեղակելը, «ժավել դնելը» եւ այլն: 10. Ու՞մ գրչին է պատկանում «Հույսեր եւ հուշեր» ստեղծագործությունը: 11. «Հաստնտիր» մարդկանց հավաքականություն: 14. Ամերիկացի աղանդավոր: 15. Եւ հաց, եւ շոկոլադ: 16. Կոլումբոսի «հայտնաբերած» ամերիկացին: 18. Ծխի «գալարվող կտոր»: 20. Նյութական, դրամական տուժում: 22. Պատասխանատու անձի «ամբիոնախոսություն»: 23. Հնդիկ ժողովուրդը նրան անվանեց Մահաթմա «Մեծ ոգի»: 24. Անխավ գորգ: 25. Մոդելյորի «գավակ»: 27. Ոչ ջրային «նավավար»: 28. Հոգու եւ մտքի «տարերային աղետ»: 29. Հին իսպանական արծաթադրամ: 30. Դերասանուհի՝ «Հիմնական բնազդ» ֆիլմից:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ 1. Թեորեմի «կայացմանն» օգնող թեորեմ: 2. Ազգային պարկ եւ մայրաքաղաք Աֆրիկայում, Քենիա: 3. Պուգաչովա, Գորբաչովա, Լեւոնյան: 4. «Արյամբ գրված» օրենքների հին հույն հեղինակ: 5. Նա, ով «մտավ մեր բակը՝ լիքը կծուծ շալակը»: 9. «Ժանտախտ»-ի հեղինակը: 12. Յոկո Օնոյի մեծագույն «ծեռքբերումը»: 13. «Վաճխառուական» 1/100: 14. Արցախյան մերօրյա լեգենդար հերոս: 17. «Մեջբերումային» խոսք: 18. Փայտակոթ երկկողմանի «լինգ»: 19. Հյուրանոցային «պերճախուց»: 21. Անգլիացու տունն իր համար: 22. Պարտադիր ծառայության «հրավեր»: 23. Գրական կեղծանունը՝ Իսկանդեր: 25. Դիոլի փողային «ընկերը»: 26. «Գիշատիչ» բերան: 27. Ծովակալ Կոլչակի հիմնած Սիբիրյան Հանրապետության մայրաքաղաքը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԵՎ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱԶԱՏ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ

N	Ձեռնարկության անվանումը	Հասցեն	Գործունեության տեսակը	Մասնավորեցման ձևը	Մասնավորեցվող գույքի գնահատվ. արժեքը (հազ. դրամ)	Մասնավորեցվող գույքի նվազ. գինը (%) (հազ. դրամ)	Մասնավորեցվող բաժնետոմսերի քանակը (հատ)	Պարտավորություններ (հազ. դրամ)	Տեղեկատ. (ազդագիր) հրապար.	Մասնավորեցման սկիզբը	Մասնավորեցման ավարտը	Չբաղեցրած հողատարածքը /հա/
1	«Սանկտ-Պետերբուրգի «Արարատ» գործարան» ՓԲԸ	Սանկտ-Պետերբուրգ, Սոֆիյսկայա 93	գինու եւ կոնյակի արտադրություն	մրցույթ	385269	385269	-	888507.2	27/06/00	27/06/00	27/07/00	4,38
2	«Արմավիրի նավթամթերք» ՓԲԸ	ք. Արմավիր, Սայաթ-Նովա 1	նավթամթերքի առեւտուր	ԲԱԲ	751438	25% եւ ավելի	751438	6991	27/06/00	06/07/00	09/08/00	10,24
3	«Գյումրիի նավթամթերք» ՓԲԸ	ք. Գյումրի, Ղարիբջանյան խճ.	նավթամթերքի առեւտուր	ԲԱԲ	526217	25% եւ ավելի	526217	1690	27/06/00	06/07/00	09/08/00	16,31
4	«Արմավիրի ոռոգելավային նավթամթերք» ՓԲԸ	ք. Արմավիր, 1 փող., թիվ 27	նավթամթերքի առեւտուր	ԲԱԲ	42670	25% եւ ավելի	42670	3142	27/06/00	06/07/00	09/08/00	10
5	«Իջեւանի նավթամթերք» ՓԲԸ	Տավուշի մարզ, գ. Ազատամուտ	նավթամթերքի առեւտուր	ԲԱԲ	758634	25% եւ ավելի	758634	946	27/06/00	06/07/00	09/08/00	5.84
	ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՆ											
6	«Չորագեսի նավթամթերք» ՊՓԲԸ	Չորագես ավան	նավթամթերքի առեւտուր	ԲԱԲ	19110	25% եւ ավելի	19110	311	-	-	-	0,1
7	«Ալավերդու նավթամթերք» ՊՓԲԸ	Լոռու մարզ, ք. Ալավերդի Շահումյան թաղ.	նավթամթերքի առեւտուր	ԲԱԲ	13837	25% եւ ավելի	13837	505	-	-	-	0,5
8	«Արթիկի նավթամթերք» ՊՓԲԸ	Շիրակի մարզ, ք. Արթիկ	նավթամթերքի առեւտուր	ԲԱԲ	128699	25% եւ ավելի	128699	2189	-	-	-	7,5
9	«Վանաձորի նավթամթերք» ՊՓԲԸ	Լոռու մարզ, ք. Վանաձոր	նավթամթերքի առեւտուր	ԲԱԲ	91613	25% եւ ավելի	91613	2123	-	-	-	2,5
10	«Բաղրամյանի նավթամթերք» ՓԲԸ	Արմավիրի մարզ Քարակերտ ավան	նավթամթերքի առեւտուր	ԲԱԲ	70554	25% եւ ավելի	70554	893	-	-	-	1,2
11	«Եղվարդի նավթամթերք» ՊՓԲԸ	Կոտայքի մարզ, ք. Եղվարդ	նավթամթերքի առեւտուր	ԲԱԲ	347361	25% եւ ավելի	347361	1104	-	-	-	20
12	«Մասիս» ՓԲԸ	ք. Երեւան, Տյուլենինի փ. 4	կոշիկի արտադրություն	ԲԱԲ	250676	25% եւ ավելի	250676	50819	-	-	-	1,28
13	«Շինարար-21» ՓԲԸ	ք. Երեւան, Արցախի 42	շինարարական աշխատանքներ	ԲԱԲ	7363	25% եւ ավելի	7363	6249	-	-	-	0,2091

Հարավումներ. ԲԱԲ- Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն, ԲՈՒՍ- Բեռնատուն-ուղեւորատարավտոտրանսպորտային, ԱՇՕ- Անավարտ շինարարության օբյեկտ

* - ընկերության կանոնադրական կապիտալի 34%-ին համապատասխանող բաժնետոմսերի տնօրինման լիազորությունը վերապահված է ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարությանը.

** - ընկերության կանոնադրական կապիտալի 34%-ին համապատասխանող բաժնետոմսերի փաթեթն անհատույց օտարվում է տեղական համայնքին:

Ազատ բաժանորդագրությամբ մասնավորեցմանը մասնակցելու համար խնդրում ենք դիմել ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության ածուրդի կենտրոններ հետեւյալ հասցեներով, ք. Երեւան, Սայաթ-Նովա 8 (հեռ. 58 79 83, 56 02 64), ք. Երեւան, Մաշտոցի 42ա, ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 7 (հեռ. 3 01 30), ք. Վանաձոր, Մխիթար Գոշի 2 (հեռ. 4 04 86):

Մրցույթների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության մասնավորեցման գլխավոր վարչություն, Երեւան, Կառավարության տուն 2 (հեռ. 56 29 33, 52 37 15, 56 33 42), ինտերնետային էջ. http://www.privatization.am, tender@arminco.com/:

Հայտարարության նպատակը զովազդն է, պաշտոնական տեղեկագրերը հրապարակվել են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի հատուկ թողարկումներում:

Նախարարությունը ողջունում է մասնավորեցման հետ կապված Հայաստանի տնտեսության մեջ ներդրումային յուրահատուկ առաջարկ եւ պատրաստ է այն քննարկել շահագրգիռ բոլոր կողմերի հետ:

Web site http://www.privatization.am

Հետեւեք ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության հայտարարություններին

Ձեւ թիվ 12
(եռամսյակային, տարեկան)

Հաշվետվություն

Բանկի դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ

Բանկի անվանումը Հայգյուղտնտեսբանկ 22000
Ամսաթիվը 30/06/00

(հազ. դրամ)

Անվանումը	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
1. Դրամական զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	69,650	31,473
Ստացված տոկոսներ	229,731	291,653
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ	570	308
Լիզինգային եւ ֆակտորինգային գործառնություններից ստացված զուտ եկամուտներ		
Արժեթղթերի վաճառից ստացված զուտ եկամուտներ	16,797	389
Արտարժույթի առք ու վաճառից ստացված զուտ եկամուտներ	1,052	1,849
Ստացված այլ եկամուտներ	3,881	6,083
Վճարված տոկոսներ	34,045	39,970
Վճարված աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ	78,555	78,221
Վճարված հարկեր	28,438	157,448
Զուտ դրամական հոսքեր այլ գործառնական գործունեությունից	97,079	7,446
2. Դրամական զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	-90,636	-237,227
Պետական գանձապետական արժեթղթերում ներդրումների նվազում (ավելացում)	190,814	55,848
Ժամկետային արժեթղթերում ներդրումների նվազում (ավելացում)	0	0
Անժամկետ արժեթղթերում ներդրումների նվազում (ավելացում)	13,500	8,000
Հետգնման պայմանագրերով տնօրինվող արժեթղթերի նվազում (ավելացում)		
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)	40,000	0
Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)	391,478	414,967
Վարկային ներդրումների նվազում (ավելացում)	287,147	574,982
Նախկինում դուրսգրված վարկերի վերադարձ		
Ֆակտորինգային գործառնությունների նվազում (ավելացում)		
Լիզինգի նպատակով ակտիվների ձեռքբերում		
Լիզինգային գործառնություններից մայր գումարների հետվերադարձ		
Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների օտարում (ձեռքբերում)	30,653	13,364
Զուտ դրամական հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		
3. Դրամական զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից	96,148	149,073
Ցրամիջոց պարտավորությունների զուտ ավելացում (նվազում)	74,710	104,232
Ժամկետային պարտավորությունների զուտ ավելացում (նվազում)	4,858	44,841
ՀՀ կենտրոնական բանկից ստացված վարկերի ավելացում (նվազում)	75,000	0
Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերի ավելացում (նվազում)		
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական հիմնադրամում	91,000	0
Վճարված շահաբաժիններ		
Զուտ դրամական հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		
Դրամական միջոցների հոսքերի զուտ աճ	75,162	-56,681
Կանխիկ եւ կանխիկին հավասարեցված զուտ միջոցներ ժամանակաշրջանի սկզբում	251,318	326,480
Կանխիկ եւ կանխիկին հավասարեցված զուտ միջոցներ ժամանակաշրջանի վերջում	326,480	269,799

Ծանուցում (հազ. դրամ)

1. Եռամսյակի (տարվա) ընթացքում հետհաշվեկշիռ դուրսգրված վարկեր	380
2. Եռամսյակի (տարվա) ընթացքում հետհաշվեկշիռ դուրսգրված տոկոսներ	1,723

IBTCI

Enterprise Privatization in the Republic of Armenia

Project Funded by the United States Agency for International Development

Բոլոր նրանց, ում կհետաքրքրի

IBTCI խորհրդատվական ընկերության մասնավորեցման ծրագրի գրասենյակը հայտարարում է մրցույթ Հայաստանում պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների եւ գույքի մասնավորեցման գործընթացի խորհրդանշանի ստեղծման համար:

Խորհրդանշանը պետք է՝

- լինի պարզ եւ արտահայտի մասնավորեցման կառուցողական նպատակը,
- արտահայտի ժամանակի հոսքը եւ ուղղությունը,
- հարմար լինի պատկերելու ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության եւ IBTCI-ի պաշտոնական փաստաթղթերի եւ տեղեկատուների, գրենական պիտույքների եւ նշանների վրա:
- եւ/կամ ցանկացած այլ ուղղություններ ըստ ձեր հայեցողության:

Հրավիրում ենք Ձեզ ներկայացնել ձեր մտահղացումների էսքիզները: Միեւնույն անձը/կազմակերպությունը/ կարող է ներկայացնել մի քանի առաջարկ: Հաղթողը էսքիզը պետք է բերի վերջնական տեսքի, ինչի համար եւ սահմանված է **ԱՄՆ 200 դոլարին** համարժեք դրամական մրցանակ: Առաջարկների ներկայացման վերջին ժամկետը **ս.թ. օգոստոսի 21-ն է**: Առաջարկները պետք է ներկայացնել փակ ծրարով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով:

Եթե ունեք տեխնիկական հնարավորություն խորհրդանշանը գրենական պիտույքների վրա տալու, մենք կքննարկենք նաեւ այդ առաջարկը:

Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել

Հեռ/ֆաքս՝ (374 2) 569 110, 523 759, 151 054
էլ. փոստ՝ ibtcpr@arminco.com
հասցեն՝ Երեւան, Հանրապետության հրապարակ,
կառավարական 2 տուն
ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն
երրորդ հարկ, 307 սենյակ
Տիգրան Հովհաննիսյան
հասարակական կապերի խորհրդատու

@rmineo Global Telecommunications

Ինտերնետ ծառայություններ «ԻՆՏԵՐՆԵՏ» սրճարանում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատվեր 1298 Տպաքանակը 4000 Ստորագրված է տպագրության 20. 07. 2000 Գինը 100 դրամ